

Հ. Յ. Գ.
ՄԱՍԼՈՅ ԴԻՐԱՆ

ԴԻՐՈՇԱԿ

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՅՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

1903

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse: 30, Rue de la République
REDACTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)
BUREAU

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՀՆՈՑԸ

Մի կտոր դեղնած թղթի վրայ, ստացւած արեան երկրից, շարագրւած թագստեան մէջ, նամակագիրը այսպէս է պատկերացնում Ալճավազի վեճակը.

„... Որ գիւղ գնաս, որ տուն ներս մտնես, ոչինչ չես տեսներ տան մէջ, բայց մի քանի մաշւած, փտած քուռչի կտորներ. ոչ ալ հաղերնին շոր ունին. դռակ վերմակ այդ փտած քուռչի կտորներէն է. Տներու մէջտեղը կայ թոնիր, որ առաւօտը կը վառեն, հողէ պոռտուկով կը դնեն կերակուրը թոնրի մէջ — ձաւար եւ շուր, ուրիշ բան չկայ. եթէ չորթան դտան, որ հաղադէպ է, կը լեցնեն մէջը, թէ չէ այնպէս կուտեն, առանց իւղի... Իսկ երեկոյեան, երբ պառկելու ժամանակը կուգայ, տան մէջ որքան մարդեր ու կիներ կան, կը հաւաքւին թոնրան շուրջը, ուրքերնին կը տան թոնրին, վրանին կ'առնեն քուռչի կտորները, եւ այդպէս կը պառկին, — տակերնին ոչինչ չկայ... Նորածին երեխայի համար անգամ օրօրոյ չկայ — խոտից հիւսած պարաններ կապելով սիւններին, կը լեցնեն խոտ ու մէջը կը դնեն մանուկը. վրան կը ձգեն քուռչի կտոր մը, եւ վերեւէն դարձեալ խոտ կը լեցնեն. պառկներն ալ խոտէ հիւսւած է. եւ դեռ ծնողներ կան, որ խոտի մէջ պառկած մանուկը բախտաւոր կը համարեն“...

Ահա տղերը մի այլ թղթակցի, ակնաստես Աանի նորագոյն դէպքերին.

„... Մատնութիւնները վերսկսեցին. կառավարութիւնը, որ դրամ չունի ոստիկաններին եւ ոչ դիւտորներին վճարելու՝ առատօրէն կը վարձատրէ լրտեսները եւ մատնիչները. Ասոնց եռանդին շնորհիւ՝ խուզարկութիւններուն վերջ չկայ... Անցեալ գիշեր, երբ տուն մը շրջապատեցին խուզարկելու նպատակով, ներս եղողներէն մին կը փորձէ փախչիլ. ոստիկանները կը բռնեն զինքը եւ կըսկսին ծեծել. հրացանի կոթով դուրսը մի քանի տեղէ կը կտորեն, քաշքշելով կը տանին կը ձգեն բակին մէջ, եւ նորէն կըսկսին ծեծել. Մայրը եւ ջոյրը կերթան պաշտպանութեան. կը խնդրեն որ գէթ չծեծեն. կը թողնեն տղան ու կըսկսին մօրը եւ աղջկան ծեծել. հրացանի կոթեր կը ջարդեն անոնց վրայ... Մնտուկները կը կտորտեն, կը կողոպտեն եղած չեղածը. Տան կը թողուն մայրն ու աղջիկը կիսամեռ վիճակի մէջ, իսկ տղան կը տանեն բանտ, որ վաղուց լի է անմեղներով“...

Եւ իբրև համատարած ցաւ, — կոտորածի սարսափը, նկարագրւած այս բառերով Ասպուրականից եւ Երզրումից, երկու միմեանցից անտեղեակ անձանց ձեռքով.

„... Անհա ասաներ, դուք դեալուր թաղաւորներու օգնութեան կը դիմէք մեր դէմ. Գարունը հասնելուն պէս կը տեսնէք թէ ինչ արժէք ունի այդ օգնութիւնը. Մեր ձեռքէն ստացած ջարդերէն յետոյ՝ դիմեցէք ուր կուգէք. Ահա ամէն ինչ պատրաստ, սուլթանի հրահանին է որ կըսպասենք. Դուք ալ, պեալուրներ, ձեզ խոստացած օգնութեան սպասեցէք“...

Սով քաղց գիւղերում:
Խուզարկութիւն քաղաքների մէջ:
Կոտորածի երկիւղ ամբողջ երկրում:
Դա է անզարդ, անխարդախ պատկերը հայկական աշխարհի, որ անցնելով 25 տարւայ խոստումների մի ամբողջ շրջան, հարուստ միջազգային դաշնագրերով եւ բեֆօրմային ծրագիրներով, նետուած է այսօր յուսահատ ջղաձգութեան գերկը, զուրկ իր լաւագոյն յոյսերից եւ ուժերից...
Այլևս չմնաց աշխարհի երեսին ոչ մի անկիւն, որ հեռաւոր կերպով իսկ հաւասարւէր Հայ-հայրենիքին, իր թշւառութեամբ, ցաւերով, իր զոհերի քանակով եւ որակով: Հայը հող ունի, բայց հաց չունի. տուն ունի, սակայն ոչ ապաստան. ոտքեր, բայց առանց շրջելու իրաւունքի. լեղու, սակայն անխօս. գիր ունի, բայց գիրք չունի. մեռելներ անթիւ ու անհամար, բայց առանց գերեզմանատան:

Վար ժամանակ, որ հայկական շարժման արշալոյսը բղնում էր, բացի ընդհանուր տխուր վիճակից, և՛ այն բախտաւոր հաւատքից, որ դարերի կրակից անցած այդ երկիրը տածում էր դէպի գաղափարը, դէպի մարդիկ, դէպի իրերի ընթացքը: Այսօր այդպէս չէ: Հայկական յեղափոխութեան գլխաւոր հն ոց ցը այժմ հայի բացառիկ թշւառութիւնն է, անսահման ինչպէս երազ եւ խորունկ ինչպէս ծովը:

Անդարձ են քաղաքական միամտութեան այն բախտաւոր օրերը, երբ հայկական ապստամբութիւնը համարում էր արդիւնք դիւանագիտական թագնւած խաղերի. երբ Ռուսաստանում, կատաղած փոքրիկ ազգի վերածնութեան շարժումներից, բթամիտ յամառութեամբ այդ շարժումը վերագրում էին անգլիական ինտրիգներին, իսկ Անգլիայում, տարւած հակառուսական ծայրագոյն զգուշութեան հովերով, ամէն մի քայլ Հայաստանում յայտարարւում էր իբրև ծնունդ սլավ միապետութեան հակաթրքական ծրագիրների, զոհելով ա շ կ ա ռ ա յ արդարութեան գաղափարը դիպլոմատիական զազեր միտումների. կամ երբ նոյնիսկ սուլթանական ըժեփ մի այլ դժբախտ զոհը, Երիտասարդ Թիւրքիան՝ փոխանակ փարելու հայկական բարձրավանդակի վրայ սկսած քաղաքական արիւնտո բողբին, իր ամբողջ մաղձը թափեց հաւատարիմ մօնղօլական արեան՝ այն անձնւէրների վրայ, որոնք՝ մայր-ժողովրդի անթիւ զոհերին միացած՝

փորձում են բանալ սքանչելի մի տեսարան Փորը-ասիական անապատի մէջ, բունապետութեան շունչով այրւած, խոպանացած վայրերում. . . Այլապէս պնդողները բթամիտ կոյրեր են և կամ վարձկան սինլքորներ. . .

Հայկական կուրը— փառք և պատիւ նրան— չունեցաւ և ոչ իսկ շօվէն, նեղ-ազգայնական շեշտ, շատ բնական մի ժողովրդի համար, որ հակառակ իր ընդունակութեան և բարձրութեան, իբրև ստրուկ ծառայեց մի այլ ցեղի, ստոր իրանից, մտաւորապէս թոյլ քան ինքը, հոչակաւոր իր ծուլութեամբ և անշարժ բնազդներով:

Տարրական արդարութեան պարզ խնդիրը էր դա, մի համեստ պահանջ, որ շնորհիւ անսանձ բունապետութեան դժոխային դաւերի՝ դարձաւ անհաշտ կուր, վիթխարի պայքար, անլուր հալածանքների մի անծայր շարան:

Սուլթանութիւնը հրձեց, թագստեան մէջ գոռոզացաւ իր արիւնտ ձեռքի գործերով, սակայն մոռացաւ, որ մարդկային պատմութեան մէջ շատ անգամ բունութեան դէմ ըմբոստանալու ամենալաւ խթանը եղել է սովը, հալածանքը, անծայր աղքատութիւնը, աւերակը: Տանջարան-Քաստիլը՝ ազատութեան առաջին կոթողն եղաւ: Եւ սովը էր, որ մղեց Պարիզը, — յեղափոխութիւնը՝ դէպի Վերսալ, — բունապետութեան բունը. . . Տարօրինակ, յաճախ անմեկնելի մի ճշմարտութիւն է այդ, որ փայլում է ինչպէս անհերքելի փաստ՝ յեղափոխական բոլոր շրջաններում, ժողովրդական ապստամբութեան դիւցազնական էջերի մէջ:

«Այս էլ մի կեանք չէ» — ահա հայ ժողովրդի տխուր բայց անխուսափելի վճիռը հանդէպ այն սոսկալի տեսարանի, որ ներկայացնում է նրա հայրենիքը, տունը, դաշտը, նրա ներկան իր ամբողջութեամբ: Եւ երբ մի խաղաղ աշխատանքի սիրահար և կրօնքի երկիւղածութեամբ ներշնչւած ժողովուրդ հասնում է այդ ծանր եզրակացութեան, — դա պիտի համարել սկիզբն մի բնորոշ շրջանի,

յուսահատ խլրտման մի նոր աղբիւր: Եւ եթէ երբեմն այդ խլրտման հնոցը մասամբ էլ ազատութեան տենչն էր կամ ռազմիկի ըմբոստացումը, այժմ այդ հնոցը, գլխաւորապէս թշուառութիւնն է, քաղցած մանուկների ծիւց, արիւնն ու դիակները, և կամ համազգային վրէժխն դրուութեանն այն վիթխարի պարտականութիւնը, որ յօշոտւած մի սերունդ դրել է նորագոյն սերունդի վրայ, իբրև հրամայական մի կտակ, գրւած զոհերի արիւնով. . .

Սուլթանական ըէժիմը իր փրկութեան համար ամբողջ Հայաստանը դարձրեց մի Ալճափազ. նա ուզեց սովի, աղքատութեան և աւերակների մէջ թաղել հայկական ազատութիւնը, արթնացող ժողովրդի իրաւունքները: Բունապետութեան դարևոր սխալն է այդ, որին զոհ գնացին անթիւ գահակալ-ոճրագործներ, որոնց, անկասկած պիտի հետևեն նրանց նորագոյն ներկայացուցիչները. . .

Ահա միլիօնաւոր մարդոց մի համախմբում, որ այլևս ոչինչ չունի կորցնելու, — նրանից խլեցին իր խաղաղութիւնը, իր օջախը, պատիւը, նրան յօշոտեցին ամուսնական առագաստի մէջ, եկեղեցում, դաշտի վրայ, ամբողջ տարիներ, գիշեր և ցերեկ: Ինչո՞ւ համար և ո՞ւմ սիրուն նա պիտի թանկ գնահատի իր կեանքը, իր օջախը, հարևանի խաղաղութիւնը, երկրի հանգիստը. . .

Եւ ո՞վ կարող է ասել որ այս մեծ յուսահատութիւնը մեծ շարժման հնոց չի դառնայ մի ազգի համար, որի պրօպագանդի աղբիւրը լոկ ազատագրական, ոգևորւած քարոզը չէ, այլ մերկ, անպաճոյճ իրականութիւնը, ուր լացը՝ կերպարանափոխում է բողոքի, յուսահատութիւնը՝ ապստամբութեան. . .

Հայկական կարմիր արիւնը՝ սուլթանը համարեց իր փրկութեան կարմիր արշալոյս, իսկ համազգային լացն ու կոծը՝ իր լսելիքը փայտայող քնաբեր մեղեդի: Այդ լացն ու կոծը կը դառնան ռազմի երգեր. . .

Հ Ա Յ Ո Ր Դ Ի Ն Ե Ր Ը

Ինքն էր, որ Երազիս մարմարեայ եզերքներուն վրայ, այս գիշեր, Ապառաժի մը նման անյաղթելիօրէն ոտքի, Իր ըմբոստացողի հրեղէն գլուխն աստղերուն մէջ մխրձելէն, Ու իր ձեռքը ատելութեան սուրերովը զինած, Հողին փրկութեանը սիրովը հրաշացած եղբօր մը նման, Որ եղբօր մը օտարացումէն իր հօգին կ'արիւնի, Խօսեցաւ ինձի Ան, և իր բառերը իրարու ետևէ, կարգ առ կարգ, Խիստ էին և քաղցր և ճշմարիտ և քինայող և առնական. . .

«Եւ ահա առաջիկ ես եմ, ո՞վ մեղկութեան ու անշարժութեան դաւակ, Որ աղմկայողօրէն այս իրիկուն հեռուներէն կուգամ, Գու քնացողի անտարբեր ու անգործօն ու եսական ու տկար,

Երիտասարդի մարմինդ ու էութիւնդ ու հոգիդ,
 Բազուկիս հարւածովը ու սուրերուն շառաչին հետ,
 Կռիւներու հարկադրիչ ժամերուն համար, վերջնականապէս ցնցելու...
 Ունկնդրէ՛ իմ ձայնիս որ այս վճռականութեան օրերուն
 Մեր ցեղին, մեր վրէժին ու մեր արիւնին աղաղակն է ահարկու,
 Ու խառնէ, ընկերացիր, եղբայրացիր, սա՛ մեր արիւնարբու ամբոխին հետ՝
 Եթէ դեռ քու հոգիդ մէջ ազատութեան ունէ կայծ վառ մնաց,
 Եթէ դեռ քու բազուկներդ քաջութիւնը ունին թշնամիներ հարւածելու,
 Եթէ սիրտդ գէթ անգամ մը խոցոտեցաւ մեր մայր-հողին մահացումէն,
 Եթէ ցեղիդ տառապանքէն ու անմեղներու կոտորածին մղձաւանջէն,
 Քու ներսիդիդ ատելութեան ու բարկութեան անտառները բարձրացան...
 Եթէ դուն դեռ կեանքիդ մէջը պիտի կրնաս նպատակի մը փաթեթելի,
 Եթէ դեռ քու աչուրներդ այդ անօգուտ արցունքներէն չի կուրացան...
 Եթէ դուն քու աղօթքներդ Ատելութեան գոռումներու փոխեցիր,
 Եթէ ցեղիդ ռազմական ու արեգակէ արիւնին՝
 Երակներուդ ու գլխիդ մէջ բորբոքելը դեռ կընդգաս,
 Եթէ դեռ Արամին, Տիգրանին, Արտաշէսին և Վարդանին,
 Յաղթանակող զօրութիւնէն քու մէջդ շունչ մը մնաց,
 Եթէ Սերոբներու, Փարեաններու, Պետօներու և Թիրայրի,
 Դիւցազնական քայլերէն քու երազողի նայանձքներուդ առջև,
 Անձնիրութեան, վրէժի և ազատութեան ճանապարհ մը բացեցաւ,
 Ոտքի կեցիր այն ատեն, եղբայրացիր խումբերուս ու մրրկէ՛ անոնց հետ,
 Որովհետև, գիտցիր որ, այս զոհարարումի, ընդվզումի և յոյսի օրերուն,
 Մեր ամէն մէկուն համար անկողնի մէջ հոգի տալը վատութիւնն է վատութիւններուն...»

Յանկարծ խումբերը հեռացան արևածագին կրակներուն մէջէն,
 Ու իրենց կամաւորի գիտակից ու վճռական քայլերուն հնչելնը երկաթեայ,
 Մարմարակոյտեր փշոտող անհամար կռաններու հնչելնը ունէր...
 Մինչդեռ թշնամիներէն անջատւած գլուխներ ջահերու պէս կը բոցավառէին՝
 Իրենց ուսերուն վրայ բարձրացուցած սուրերուն կատարներէն...
 Ու տեսայ որ տաք արիւն մը կը քամէր, խռչափողերէն, կաթիլ առ կաթիլ, դէպի վար,
 Անոնց ամէն մէկուն լայն ու զօրաւոր ու մերկ ծոծրակները թրջելէն...

Եւ ես այն ատեն նախանձութեամբ ու տարփանքով հողին վրայ ծնրադիր՝
 Իրենց հերոսի քայլերուն հետքը երկիւղածօրէն համբուրեցի...

ՍԻԱՄԱՆԹՕ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵՒՐՕՊԱՆ

Երկիրը փոթորկում է շարունակ, դէպքերը արագ-
 արագ գահավիժում են իրար ետեկից, կռիւր՝ մոլեգին
 ու յուսահատ շարունակում է երկուստեք, — ժամանակը
 յղի է ահաւոր անակնկալներով և ոչ որ ապահով չէ՛
 արևելեան այդ ծխորի մէջ՝ ոչ թիւրքը, ոչ մակեդոնացին,
 ոչ բուլգարը, ոչ իսկ Եւրոպան։ Ջէնքերի շաչիւնը դադար
 է առել կարծէք, և խօսքը ուժանակին է։ Ռուսքը
 պայթում է սասանեցուցիչ որոտումով երկաթուղային
 կամուրջների տակ, տաճկական ու եւրոպական հիմնար-
 կութիւնների մէջ, զարդանդ է պատում մահմետական
 անհաւատ խուժանին և Համիդի զօրքերին։ Շէնքերը
 խորտակում են ուժանակի հարւածներից, թողնելով
 իրենց փլատակների տակ բազմաթիւ զոհեր — թիւրք,
 սլաւ, եւրոպացի...

Սալօնիկի վերջին անցքերը ուժգնօրէն ցնցում են քա-
 ղաբակիր ժողովուրդներին, մի տեղ զգւանք ու զայրոյթ,
 մի այլ տեղ հիացում պատճառելով։ Անարխիստներ,

ոճրագործներ, ձայնում է պոռնիկ մամուլը, ըստ վաղեմի
 սովորութեան... Ոճրագործներ, գոռում էր նոյն մա-
 մուլը 96-ի աշնան, երբ ուումբը առաջին անգամ որոտում
 էր Կ. Պօլսի փողոցներում։ Օսմանեան բանկի առջև,
 երբ նա եկել էր ազդարարելու, որ հայ ժողովուրդի դատը
 տակաւին չէր խեղդւած հազարաւոր նահատակների
 արեան մէջ, որ յեղափոխական ամենաչնչին փոքրամաս-
 նութիւնն անգամ իր յուսահատ վճռականութեամբ
 կարող է սասանեցնել մի ահագին պետութիւն, կարող
 է փոթորկել դիւանագէտների հանգիստը...

Ի՞նչ փոթ հայ ու մակեդոնացի կտրիճներին, թէ
 անարժան մամուլը «անիշխանական» է հռչակում
 նրանց. ի՞նչ փոթ, թէ եւրոպական նացիօնալիստները,
 շահի, կապիտալի ներկայացուցիչները, փրփուրը բերնին՝
 անիծում են նրանց, այդ «բախտախնդիր կործանիչնե-
 րին» — նրանք լաւ գիտեն իրենց արածը և իրենց
 անելիքը։ Ի՞նչ ունին կորցնելու — իրենց ստրկական շղ-
 թանքերը միայն։ Եւ շարան-շարան դնում են պարտքի
 հերոսները, գնում են դէպի արիւն, դէպի անխուսափելի

մահ: Ճանճերի պէս կոտորուում են նրանք անդուռ ու անհասար կռիւների մէջ, հարիւրներով ընկնում են թշնամու ձեռքը, բայց կրկին հարիւրները ասպարէզ են կոչուում, կրկին խանդ ու ոգևորութիւն է տիրում յեղափոխական բանակի մէջ, ուր շարունակ տենդային պատրաստութիւններ են տեսնուում՝ աւելի ուժգին և աւելի լայն չափերով հարածելու համար...

Թուում է թէ մի զարհուրելի վճռականութեամբ՝ ապստամբները որոշած են — դիպլոմատիայի յանցաւոր խաղերին վերջ դնելու համար — կանգ չառնել ոչ մի խոչընդոտի առջև, չենայել անգամ եւրոպական ամենաբարձր շահերն ու հաստատութիւնները... Քիչ չեն գերագոյն այդ Յուսահատութեան մէջ խիզախ թէօրիտիկոսներ, որոնք այդ մեթոդի մէջ են միայն տեսնում իրենց յաղթանակի ապահովագոյն գրաւականը:

Ի՞նչ է անում Եւրոպան: Ի՞նչ եղաւ ուսուստրիական ըէֆօրմների ծրագիրը, ինչո՞վ է զբաղւած Հիլմի փաշայի բարենորոգչական յանձնաժողովը: Հրդեհը բորբոքուում է օր աւուր — իսկ այդ յուզիչ հարցումներին պատասխան չկայ տակաւին: Մակեդոնիան սպառնում է ընդհանուր ապստամբութիւն — իսկ այնտեղ դեռ ևս քայլ չէ արւած դէպի ուժգործ: Ազատւած քաղաքական բանտարկեաների տեղ՝ նորերն են ձերբակալուում ու քրտորուում: Մի քանի վայրերի մէջ մի երկու քրիստոնեայ ժանդարմներ մոցնելով հանդերձ՝ թշնամին շարունակում է իր ահուելի ճնշումները: Ոչ մի լուրջ փոփոխութիւն: Լաւատես էինք, կարծելով թէ ծրագրւած ուժգործները անարգել կը գործադրուէին:

* * *

Մակեդոնիայի ճակատագիրը յանձնւած է առժամապէս Ռուսաստանին և Աւստրիային — երկու պետութիւններ, որոնք թէև առերևոյթս համաձայն՝ բայց իրօք ներշնչւած են փոխադարձ ծայրայեղ անվստահութեամբ, քանի որ հակամարտ շահեր ու ձգտումներ ունին տաճկական Արևելքում: Աւստրիան, որ վաղուց աչք է դրել Սալոնիկի վրայ, առայժմ իրեն պատրաստ չէ զգում՝ արշաւելու դէպի Մակեդոնիա, եթէ անգամ պատրաստ լինէր՝ իր դաշնակից Գերմանիան, Թիւրքիոյ հզօր հովանաւորը, չէր կարող լուռ հանդիսատես լինել Աւստրիայի յառաջխաղացութեան, Հաբսբուրգեան յDrang nach Osten“-ին, որը ոչինչ բարիք չէ խոստանում Գերմանիայի ուսլական քաղաքականութեանը: Ռուսաստանը ևս վաղաժամ է դիտում առայժմ ունէ քայլ դէպի իր բաղձալի նպատակը — Թիւրքիայի անդամատուրը, որից նա սպասում է առիւծի բաժինը:

Ահա թէ ինչու թէ Պետերբուրգը և թէ Վիեննան լաւ են համարում պահպանել statu quo-ն, մինչև որ կը հասնէ լուրջ միջամտութեան համար պատեհ վայրկեանը:

Այնքան ծանր անցքեր տեղի ունեցան ուժգործների յայտարարումից իվեր — վայրենի արնաուտները ոտքի կանգնեցին և քաջալերւած Երլզըզ ֆիօսկից՝ փորձեցին դիմադրել ուժգործների իրագործման. աւելի ևս. ցարի ներկայացուցիչը, հիւպատոս Շչերբինան, սպանւեց Միտրովիցայում՝ օրը ցերեկով ալբանների ձեռքով — որպիսի հարւած ուսուսական հմայքին... Այդ լուրը ալեկոծեց քաղաքական աշխարհը. շատերն էին սպասում, որ Ռուսաստանը կը փոխէր իր դանդաղ ու երկչոտ ընթացքը, որ նա սաստկապէս վրէժխնդիր կը լինէր սուլթանի

կառավարութիւնից: Սակայն, իրերը շարունակեցին ընթանալ նախկին եղանակով. Պետերբուրգը ոչ միայն չպահանջեց մահւան պատիժ սպանողի համար, այլև, չնայած Ջինօվիելի յորդորներին ու աղերսանքներին՝ չուզեց անգամ յարգել դեսպանի ինքնին անմեղ առաջարկը — թոյլ տալ որ սպանւած հիւպատոսի մարմինը Կ. Պոլիս բերւելու միջոցին՝ կազմակերպւէր Պերայում հանդիսաւոր յուղարկաւորութիւն... Ցարը դիւրութեամբ զիջեց Համիդի խնդրանքին՝ թոյլ չտալ որ այդ տեսակ ցոյցերով վերաւորէր, գրգռէր իսլամ ժողովուրդը:

Ալբանիայի յուղումները մի պահ գրաւեցին ընդհանուր ուշադրութիւն, դարձան օրւայ հրատապ խնդիր: Նախագծւած ուժգործները ի կատար ածելու համար, անհրաժեշտ էր սանձահարել արնաուտներին, անհրաժեշտ էր ղեկւած ուժ՝ Միտրովիցայում: Ո՞վ պիտի ղեկէր այդ ուժը: Միտրովիցան գտնւելով աւստրիական ազդեցութեան շրջանում՝ Վիեննայի կառավարութեան վրայ էր ընկնում այդ վայրը խաղաղացնելու պարտականութիւնը, եթէ Թիւրքիան ինքը ձեռք չառնէր ազդու միջոցներ: Իսկ Վիեննան շատ էլ յուզւած չէ երևում Ալբանիայի անցքերով, այն ինչ սուլթանի կառավարութիւնը թէպէտև Ռուսաստանի ճնշման տակ ուղարկում է բազմաթիւ զօրք դէպի խոզովութիւնների վայրը, թէպէտև առերևոյթս սպառնում է ալբաններին, բայց իրօք քաջալերում ու թև է տալիս նրանց: Եւ նա ունի իր պատճառները:

Արնաուտը նոյն դերն է խաղում եւրոպական Ցաճկաստանում, ինչ որ քիւրդը ասիականում. Երլզըզը դաշնակցել է այդ վայրենի ու գիշատիչ տարրի հետ, որպէս զի դիւրութեամբ ստրկացնէ սերը ու բուլգար գեաւուրներին, այլև տաճիկ ազատամիտներին: 1898 թւին թիւրք կառավարութիւնը իր սեփական հրացաններով զինեց բոլոր ալբան ցեղերը և բացի այդ, յայտնի է, որ Երլզըզի պահականոցը կազմում են այսօր ալբաններ: Աերջիններս էլ իհարկէ երախտամոռ չեն գտնուում. քանիցս նրանց պարագլուխները միաբան երգել են հաւատարիմ ծառայել փատիշահին և պաշտպանել յորայ՝ ի դէմ Ցաճկաստանի ամբողջութիւնը:

Եւ այսօր ահա խաղացում է մի ուշագրաւ կատակերգութիւն. սուլթան Համիդ դրւած է երկու կրակի մէջտեղ. կամ նա արտաքին ճնշման տակ զէնք պիտի բարձրացնէ արնաուտների դէմ, որոնց մինչև օրս գուրգուրել ու հովանաւորել է, կամ թէ պարզապէս պիտի ըմբոստանայ պետութիւնների կամքի դէմ: Առաջին դէպքում նրան սպառնում է ալբանների գայրոյթը, որը կարող է փորձանք բերել նոյնիսկ իրեն, փատիշահին... Այդ պատճառով և Երլզըզը ամենևին տրամադիր չէ յարձակողական դիրք բռնել ալբանների վերաբերմամբ, չնայած ուժերի կենտրոնացման Ալբանիայում: Խոստումներ, ընծաներ, մեղմ յորդորներ ու սպանալիքներ, — ահա թէ ինչով են ձգտում հանդարտեցնել արնաուտներին:

Տխուր է, շատ տխուր, դրութիւնը Մակեդոնիայում: Ապստամբական կռիւր ունեցաւ արդէն ահարկու թափեր, արիւնը հոսեց քաղաքներում ու դաշտերում, սակայն և այնպէս դեռ մինչև օրս էլ թէ տաճիկը և թէ Եւրոպան յամառում են իրենց դիրքի մէջ... Այնուամենայնիւ յուսահատուելու տեղիք չկայ. Մակեդոնիայի ճակատագիրը վերջին քննութեամբ գտնւում է դարձեալ մա-

կեդօնական կտրիճների ձեռքում, որոնք տակաւին հեռու են լքումից և ընդունակ են դեռ շատ սոսկալի հարւածներ հասցնելու թշնամու գլխին: Պետութիւնները ուզեն-չուզեն՝ պէտք է միջամտեն լուրջ քաղաքական ուէֆօրմներով, քանի որ ներկայ փոթորկալից վիճակում թէ իրենց շահերն են չարաչար տուժում և թէ միջազգային խաղաղութիւնն է վտանգուում:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Վ Ա Ն Է Ն

I

22 յունւար, 1903

Յունւար 4-ի շաբաթ գիշեր լոյս կիրակի, գիշերւան ժամը 8-ին, երբ տղաքը դեռ նոր պառկած էին, Վարդգէսը շշուկ մը լսելով վեր կ'ելնէ և կը տեսնէ որ պարտէզին մէջ, ծառերուն տակ, մարդեր թագնւած կըսպասեն: Չայն կուտայ ընկերներուն՝ «տղաք, վեր կացէք, պաշարած ենք»: Ընկերները կէս հագած դուրս կը վազեն կը տեսնեն որ իրենց դիմացի տանիքն ալ մարդեր կեցած են: Տղաքը դէպի փողոցի դուռը կը վազեն, դուռը կը բանան և կըսկսին կուռի, տունէն դուրս գալու նպատակով: Վարդգէսը և իր ընկերներէն մէկը ոտքերէն կը վիրաւորին, բաւական կուռիէ վերջ կը տեսնեն որ անկարելի է տունէն դուրս գալ, ետ կը դառնան որ պարտէզի դռնէն փախչին, բայց թշնամին այդ կողմի տունըն ալ բռնած ըլլալով՝ տանիք կը բարձրանան, հոնկէ ելք մը գտնելու համար: Գոբախտաբար իրենց տունը անջատ ըլլալով՝ դրացի տանիքը անցնելու համար նեղ փողոցի մը վրայէն պէտք էր ցատքեր: Ընկերները յաջողութեամբ կը գործեն այդ ուստումը, բայց Վարդգէսը ոտքէն ծանրապէս վերաւորած ըլլալով՝ ցատքելու միջոցին փողոց կ'իյնայ ու կը մարի: Ընկերները կ'անցնին կերթան, իսկ ինք արիւնաքամ ու ուշաթափ՝ չգիտցելի ո՞րչափ ժամանակ՝ այդ խուլ փողոցին մէջ մնալէ ետքը, վերջապէս կըսթափի և քաշկուտելով մօտակայ տան մը պարտէզը կը մտնէ: Տանտէրը՝ կէս խելագար մարդ մը՝ հազիւ հազ կը համողի ընդունիլ ու պահել զինքը: Յաջորդ առաւօտ ոստիկանութիւնը խուզարկութիւն կատարելով՝ ձիւնին վրայ արիւնի հետքեր կը գտնէ և այդ հետքերը բռնելով կերթայ ուղղակի յիշեալ տան դուռը կը զարնէ: Տանտէրը հայհոյանքներով կը մերժէ դուռը բանալ: Վարդգէսը պատուհանէն ոստիկաններու հետ խօսելէ ետքը՝ հակառակ ոստիկանապետի կեղծ ու պատիր յորդորներուն ու խոստումներուն՝ նախ չի ուզեր անձնատուր ըլլալ, ձեռքը ճակտին բաւական կը մտածէ, սակայն իր ուժառայառ վիճակին մէջ երկար դիմադրութիւն մը անկարելի և թաղին անպաշտպան բնակիչներուն համար աղետալի գտնելով՝ վերջապէս դուռը բանալ կուտայ: Գեռ պահ մը առաջ պատուհանին տակ անուշ լեզու թափող շունները ներս խուժեցնուն պէս կը յարձակին անկարող վիրաւորին վրայ ու կըսկսին անգթաբար ծեծել: Յետոյ մարդու մը շալակը տալով՝ մինչև կուսակալի տան դրան առջև կը տանին զինք և կիսամեռ վիճակի մէջ ձիւնի վրայ կը նետեն: Գոմիսեր Հիւսնին և իր տղան վրայ հասնելով՝ հոգ ալ բարբարոս ծեծ մը կըսկսին, սակայն կուսակալը պատուհանը բանալով ուղիղը, ինչ կուզէր կիսամեռ մարդէն՝ կը պոռայ և

կը հրամայէ որ ներս առնեն վիրաւորը: Կուսակալի տան մէջ օր մը մնալէ ետքը՝ կը փոխադրեն բանտը, ուր առանձին սենեակի մը մէջ փակած՝ կ'աշխատին վէրքերը բուժել: Հարցաքննութեան համար պատգարակով կը տանին կը բերեն զինքը: Իրեն վրայէն բռնուած են երկու ատրճանակներ, մէկը մաուզէր և միւսը Սփտ Վէսսըն՝ հանդերձ փամփուշտներով:

II

2 մարտ

Անցեալ տարի օգոստոս 20-ին տեղս տուն մը խուզարկեց և այդ խուզարկութեան պատճառով տան տղաքները որ երեք եղբայրներ էին, փախստական եղան, թէև ոչինչ յանցանք չունէին: Այս տարի փետրուար 9-ին այդ տունը նորէն խուզարկեցին, տղաքներէն մէկը տան մէջ կըլլայ: Երբ կը տեսնէ որ տունը կը պաշարեն՝ կը փախչի կերթայ այգիի պատին տակ կը պահուի, ոստիկանները տուն մտած ատեն այգիի մէջ, ձիւնի վրայ ոտքի հետք կը նկատեն և այդ հետքը բռնած կերթան կը գտնեն տղան ու կըսկսին ծեծել: Հրացանի կոթով գլուխը մէկ քանի տեղով կը կոտրեն և քաշքշելով կը բերեն տուն, կը ձգեն բակի մէջ, նորէն կը ծեծեն: Մայրը և քորերը կերթան պաշտպանութեան, կը խնդրեն որ գէթ չծեծեն, կը թողնեն տղան և կըսկսին մօրը և մէկ աղկան ծեծել: Կը ձգեն գետին ու հրացանի կոթերով անգթաբար կը հարուածեն, չեն նայիր ոչ աչք, ոչ գլուխ, երկու հրացանի կը ջարդեն մօր ու աղջկայ վրայ, այնպէս որ շնչասպառ կը ձգեն: Այդտեղ գտնուած է և հայ գոմիսեր մը՝ Մկրտիչ էֆէնտին, որի գուլթը հազիւ հազ կը շարժի և ձեռքերնէն կ'առնէ դիակ դարձած մայրն ու աղջիկը: Տունը կը կողոպտեն, սնտուկները կը կոտորեն և մէջը եղած զգեստներն ու կանանց արծաթէ զարդերը կ'առնեն: Տան մէջ կը թողնեն երկու խեղճ, անպաշտպան կիներն ու աղջիկը կիսամեռ վիճակի մէջ իսկ տղան բանտ կը տանեն. . . Ո՞վ պիտի հարցնէ, փնտրէ, թէ ինչեր կը կատարէին երկրի մէջ, ասոնք տեղի կունենան եւրօպական ներկայացուցիչներու աչքերուն առջև. . . կը տեսնեն և կը լռեն:

* * *

Երկրի դրութիւնը վատթարացաւ, նորէն խուզարկութեան ձայն կայ, թիւրքեր և քիւրդեր՝ ամենքն ալ պատուաւոր կըսպասեն, որ յարձակին հայերուն վրայ և կողոպտեն. մեզի կ'ըսեն. «անհաւատներ, գարնան ձեզ բոլորիդ պիտի կոտորենք»: Ժողովուրդը վախի մէջ է և չգիտէ ինչ ընէ:

III

8 մարտ

Երկար ժամանակէ իվեր կառավարութիւնը կ'աշխատէր ձեռք բերել Վարդգէսը, բայց անյաջող ելան իր փորձերը: Վերջերս ճարահատեալ դիմեց իր սովորական միջոցներուն, ձեռք առաւ անարժան հայ Սէմէրճեան խաչիկը, կաշառեց նրան 30 ոսկիով, որպէս զի Վարդգէսը իրեն յանձնէ: Երկար աշխատելէ վերջը յաջողեցաւ հասնիլ իր չար նպատակին, — Վարդգէսը ձերբակալուած է: Մատնիչը և իր ընկերները մեծ ցնծութեան մէջ էին: Մատնութեանէն քանի մը օր յետոյ նոր վերարկու մը շինեց, փառաւոր կերպով հագնւեցաւ. . . Կառավարութիւնը յանձնեց իրեն ատրճանակ մը իր կեանքի պաշտպանութեան համար, ալ սպասող էր: Կառավարութիւնը

իրեն պաշտպան, ատրճանակը մէջքը՝ ալ ո՛վ կարող էր մտնենալ: Ամէն օր իր եղբայրներուն հետ թև-թևի տւած՝ կը խօսէին, կը խնդային... Կառավարութիւնը պահանջեր էր, որ մեր ընկեր Վարդանն ալ իրեն յանձնէր. մասնիչը սիրով ընդունած և 4 օր ժամանակ ուզած էր: Երկրորդ օրը արդարութեան դաշտնը մտնեցաւ մասնիչի սրտին մէջ: Խեղճ մարդ, փափագը սիրտը մնաց... Տասներկու դաշտին հարւած և մի գնդակ հետը տարաւ: Տէռօրը կատարեց հրապարակի վրայ չորս ճանապարհների մէջտեղը:

Խաչիկը սուլթանի ամենահաւատարիմ հպատակներէն մէկն էր եղած. խոստացեր էր Վանի մէջ յեղափոխականները մատնել և յեղափոխութիւնը կործանել: Այդ մտքով ցուցակ մը կազմած էր և ներկայացուցած էր կառավարութեան: Վարդգէսը բռնել տալուց քանի մը օր վերջը, կը պատրաստէր տունը փոխադրել տաճկաց թաղը, ո՛վ գիտէ թերևս հախ դին ընդունելու: Անցազիր ալ առեր էր, որ երթայ Կ. Պօլիս պաշտօն ու պատանշան ստանայ, ափսոս որ անցազիրը սխալ էր առած: Կառավարութիւնը 70 դահեկան ամսական կապեց Խաչիկի կնկան, իր պաշտօնեաները և զօրքերը ամսականի երես չեն տեսներ, հայի կնկան 70 դահեկան ամսական կը կապէ...

Սէմերձեանի ընկերը, Չալղատարենց Հաճի Մանուկ, որ Խաչիկի սիրելի ընկերն էր, նոյն օրը միասին կ'ըլլան, երբ սպանութեան փորձը կը կատարէր, մէկ անգամ փորձ կ'ընէ ազատելու իր ընկերը. մեր քաջը վեր կը կենայ, ծնկները դրած իր որսի կուրծքին, և դաշտին հարւած մը կուտայ անոր, բայց չի հասնիր նպատակին. նա կը փախչի և կերթայ լուր տալու պահականոցը: Զինքը կը բռնեն և կը հարցնեն, թէ ո՛վ էր սպանողը. վախէն չի կարող ըսել, թէ այս ինչ մարդն է: Կառավարութիւնը խիստ չարճարանքի կ'ենթարկէ զայն, թէ «դու գիտես ու չես ըսեր», բայց նա աւելի լաւ կը համարէ կառավարութեան պատիժը, քան թէ յեղափոխականի վրէժխնդրութիւնը: Այժմ պառկած է բանտին մէջ:

Այս տարի պարիամին ամսականներու տեղը կառավարութիւնը գարի բաժնեց զօրքերուն: Յունուար ամսի 10-ին յիսուսի չափ հեծելազօրքեր իրենց ղէկքերն ու ձիերը առնելով փախան: Կառավարութիւնը զօրք ուղարկեց անոնց ետևէն, յետ դարձուց և բերեց բերդին մէջ բանտարկեց: Կը հարցնէ թէ ինչո՞ւ կը փախչիք, ի՞նչ կ'ուզէք. կ'ըսեն որ մեզ ամսական չկայ, հագուստ չկայ, մեր ժամանակը լրացեր է, մեր արձակման թուղթը չէք տար, ի՞նչ պէտք է ընենք, իհարկէ պիտի փախչինք:

Փետրուար ամսի 11-ին 80 հեծելազօրք նմանապէս փախան, կառավարութիւնը պուկալակի ամսայ նախընտրական ցուպը ձեռքին դիշեր-ցերեկ կըսպասէ քաղաքին շուրջը: Այս փախած զօրքերը ճանապարհին, քաղաքէն դուրս, կը պատահին Կիրաշէնցի ուսին, որ գիւղից հաւաքած 7 ոսկի տուրքը կը տանէր կառավարութեան յանձնելու, կը բռնեն կը կողոպտեն: Պատահած գիւղերու մէջ կը կողոպտեն, կը ծեծեն, կը բռնաբարեն: Կանցնին Արձէշ այն տեղերն ալ կը շարունակեն իրենց կողոպուտները. ազատ, համարձակ իրենց արածը կ'ընեն. կառավարութիւնը ձայն չի հաներ, որպէս զի այդպիսով սիրաշահ է և յետ դարձնէ զանոնք:

Ն Ա Մ Ա Կ Բ Ա Ս Ե Ն Ե Ն

26 փետրուար, 1903

Անցեալ նամակներիցս յայտնի է ձեզ, որ տեղական թիւրք և հայ ժողովուրդները ներկայացուցիչներ էին ուղարկել՝ քրդերի չարութիւնների մասին բողոքելու, արդարութիւն աղերսելու: Դժէ բողոքողը հայերը լինէին միայն, նախկին տարիների նման, կառավարութիւնը յեղափոխական սեպարատիստների դաւ համարելով, խեղճերի արցունքը կ'արհամարէր և մեծաւորի առաջ երեսը գետին քսող մերկ ու թշուառ գիւղացուն ձեռնունայն ետ կը դարձնէր. այժմ թիւրքերն էլ մեզ հետ են, կառավարութիւնը կասկած չի տանի, այսպէս էր ասում Բասենում յայտնի թրքասէր մի հայ, դէպի որը դարձած վարանոտ հայեացքները կարծես ասում էին՝ «յերանի թէ այդպէս լինէր», և թիւրք ու հայ խառնուած գնացին իրենց վերքերին դարման խնդրելու. թիւրքը իր արենակից ու կրօնակից եղբօր մօտ էր գնում. շլինքը ծռած՝ հայը քայլում էր նրա յետևից, մէկ արնախուռից միւսին էր գնում գանգատելու: Օգը ցնդած հազարաւոր «դուցէ»-ներին մէկն էլ աւելացրեց ու գնաց, մարած յոյսի մի փոքրիկ, անշան կայծ սրտում, ամէն տեղից յոյսը կտրած հայը մի անգամ էլ փորձել ուղեց իր բախտը վիճակից թիւրքի հետ: Հեռագիրների մի շարք տեղացին Երզնկայի միւշերին (4-րդ զօրաբանակի հրամանատար Զէքի փաշայ) և Կարնոյ կուսակալի միջոցով ստացան հազարաւոր անգամ սուտ հռչակած պատասխանը. «վերահասու կը լինենք ձեր վիճակին»: Հայերը յետ դարձան կրկին շլինքները ծռու, քրդերի վրէժխնդրութեան ահը սրտներում, բայց թիւրքերը դադար չառան, դարնան շատ հաւանական յարձակումների դէմ ազատ գործելու համար մի փորձ ևս պատրաստում են անելու, պատրաստել են մի աղերսագիր սուլթանի անունով, որով աղաչում են իրենց դառն վիճակին մի դարման, հակառակ դէպքում իրենց պատասխանատու չեն համարում ունէ խառնակութեան. թշուառները յոյս ունին, թէ Երզնկայի ճիւղի տւած թէկուզ մարդասէր հրամանը կարող է արձագանք գտնել տաճկական ոտից մինչև գլուխ կեղտի մէջ խրւած պագշտու ու ընչաքաղց պաշտօնեաների կողմից:

Իսկ քիւրդը անխուով շատ հանգիստ կերպով շարունակում է իր թալանն ու բռնութիւնները, սպանալով վրէժ լուծել իր դէմ բողոք տուողներին: Թիւրքերն ու հայերը շատ լաւ գիտեն, որ դարնան հետ իրենց համար սև օր պիտի լուսանայ, աւելի անտանելի է հայի վիճակը, զուրկ ինքնապաշտպանութեան ունէ իրաւունքից ու միջոցից՝ նա բախտի խաղին է թողել իր ճակատագրի որոշելը ու սպասում է դարնան... Ո՞վ օգնութեան կը գայ նրան, ինքն էլ չգիտէ: Արդեօք երկա՞ր պիտի սպասէ դրսի օգնութեան. կառավարութիւնը՝ խուլ այս բոլորի վերաբերմամբ՝ քրդերին օրէցօր աչքաթող է անում, շատ դէպքերում էլ գաղտնի խրախուսում: Զուկիների ցեղապետ Ղուլի խանը, որի համար մահաւան վճիռ էր տրւած, անցեալ աշնան տարւեց Կարին և համիդիէ գրւելով ոչ միայն ազատեց, այլև գայմագամի պաշտօն ստացաւ: Հասնանցիներու ցեղապետ յայտնի արնախուժ Բըզախ աղան, օրերս Բասենով միւշերի մօտ տարւեց. միամիտներն ասում են, որ պիտի կախեն, իսկ նման տասնեակ օրինակներ անսողին պարզ յայտնի է, որ

պիտի յանգի. . . Հայրենիքի ամէն կողմը աւար ու թալան, արիւնհեղուծիւն և առւանգում,—ասոնք յաւիտենական յանկերգի մը պէս կը տաղեն ամէն օր մեր ականջներին. . .

Իրաց այս վիճակէն դուրս ներկայ տարւայ շրջանին պարտքերու հաւաքման եղանակը փոխելուն հետ՝ ճնշողական ծրագիրն ալ իր բարդեալ յօդւածները ունեցաւ. տուրքի հաւաքում ըսելով միայն թալան հասկնալու է և ոչ ուրիշ բան. ամէն կողմ խայտառակութիւն խայտառակութեանց. ծեծ, բանտ, կռիւ և այլն. կառավարութեան զինուորն ու ժանտարմը լոյս օր է տեսեր. խումբ խումբ կը շրջին հայ գիւղերը, պատուական կեր, խում և բարբարոսի քմահաճոյքներ. քանի մը տարւայ յետեանալ տուրքերը մեկանց կը պահանջեն և անպատճառ պիտի առնեն. տան կահ-կարասի մինչև վերջին անկողինը, անասուն և խն,—բոլորն ալ անխնայ ի վաճառ կը հանուին, որի՞ հոգն է հայի ապագան կամ սովամահ կորուելու երկիւղը,—ասոնք բոլորի օրինակներն ու փորձերը տեսանք յանձին ամբողջ հայաբնակ գիւղերու և նոյնիսկ քաղաքին վրայ: Ամէն կողմէ աղերս, ամէն կողմէ բողոք դէպի ազգային առաջնորդարան՝ իրաց այս վիճակէն դարման մը տարուելու, բայց ոչինչ արդիւնք: Քաղաքիս միւլթէսարիֆ փաշան բացարձակ յայտարարած է որ յբարձրագոյն հրամանները միայն կը կատարենք, մենք ինքնին հեղինակութիւն չունինք¹: Գուրպան պայրամի առթիւ կառավարական սնտուկը հայ մի քանի վաճառականներէ Յ1 օսմ. լիւրայի փոխառութիւն ըրած է անսական վճարելու համար. ի՞նչ անկում. . .

Ի լրումն չարեաց՝ այս օրերս ընդհանուր ջարդի մը շնորհիւ կը պտտի դարձեալ ժողովրդի ամէն խաւերու մէջ. կ'ըսուի թէ մեծ դահիճը դարձեալ հրաման ըրած է հայերը կոտորելու: Ամէն կողմ ահ ու սարսափ կը տիրէ, 95-96 թւականներու փորձը աչքերնուս առջև է. դժբախտ ժողովուրդ. ուրկից որ հով մը փչէ, հակահարածը հայի գլխին է. . . Մակեդոնիան կը յեղափոխուի, այնտեղի ժողովուրդը կը ջարդուի մեզ բախտակցելու համար. մենք ևս զերծ չենք մնար դայն հարւածող սուլինի հարւածներէն: Ռուսիան պահանջումներ կ'ընէ թիւրքիայէն. ի պատասխան՝ սա մեզ ջարդելու կը պատրաստուի: Եւրոպական պետութիւններէն մին կամ միւսը ծրագիր մը կ'առաջարկէ,—դարձեալ հայերը բնաջինջ ընելու սպառնալիքը կը լսուի ամէն տեղ. կարծես թէ մենք ըլլայինք ամէն խնդրի ահն ու աղբիւրը, կամ ամէն պետութեանց պահանջներուն հեղինակողը. . .

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

Տ Ե Ղ Ե Կ Ա Փ Ի Բ Ս Ղ Ե Բ Դ Ի
(Շարունակութիւն. № 2-ի)

8 նոյեմբեր, 1902

Յ ու ն ի ս 5. — Օր մ'առաջ Իտարէի մէջ նստած ատեն Սղերդի քաղաքապետ Համէ էֆէնտին՝ բանակոխ մը կ'ունենայ նագիպ Սէյտ Ալիի հետ: Ասոր համար Ասամիէաւանդ (Սղերդի էջգըյաներու պետը) զինեալ ուրիշ երիտասարդի մը հետ, կառավարական պաշտօնատան դուռը կըսպասէ պահ մը և երբ քաղաքապետը կ'անցնի, դառագեղէն փախած առիւծի պէս վրան կը յարձակի, կաւատ, շնացող, բիճ և շն անուր անարգանք-

ներու տեղատարափ մը թափելով գլխուն, առանց բնաւ ակնածելու կամ վախնալու զինք շրջապատող պաշտօնեաներէն, որոց ալ և նոյնիսկ սուլթանին, ուղղակի կամ անուղղակի, այդ յիշոց-նախատինքներէն բաժին հանել մոռցած չէր և այն ալ խոշոր տեսակէն: 2Ը մոռնանք յայտնել որ այնքան պաշտօնեաներէն ու ոստիկանզինւորներէն և ոչ մին կըցաւ էջգըյան մէկ մաղին դպել կամ արգելքի տակ առնել զայն, գոնէ ի խրատ այլոց: Տեսար հեղինակութիւնը մեր կառավարութեան:

Յ ու ն ի ս 11. — Պըրքէ Տժուար անուն ասորի երիտասարդին գեղանի կինը կ'առւանգուի Քիւզըքի մէջ նոյն գեղի աղային ծառան Ազիզի ձեռքով: Վեց օր պտտցնելէ, պղծելէ և չարչրկելէ յետոյ, Սղերդ կը բերէ տաճկցնելու, կինը սակայն չտաճկնալուն, յանձնեցաւ էրկանը:

Յ ու ն ի ս 27-ին, գիշեր, Ալբքան աշիրէթէն խումբ մը չարագործներ կը յարձակին Ռնտվան գիւղին նախրին վրայ և հրացանի գնդակով կը վերաւորեն նախրորդ Պօղոսը, որուն վիճակը ծանր և յուսահատական է:

Յ ու ն ի ս 8. — Սղերդի Տէի ճամբուն վրայ մի քանի հայեր կը կողոպտուին Վամասան աշիրէթէն 7-ը զինեալ չարագործներու կողմէն:

Յ ու ն ի ս 9-ին գիշերը Պշար աղան մի քանի զինեալ ընկերներով Աիզգէլտերա գիւղը կերթայ և Փանոսեան Պէշիչին ձին բռնի կ'առնէ:

Յ ու ն ի ս 12-ին Սղերդէն 5 ժամ հեռու Թէլան անուն գիւղի մօտերը մի քանի չարագործ քիւրդեր կը կողոպտեն Սղերդցի հայերէն Ղուկաս և իր ընկերը:

Յ ու ն ի ս 14-ին զինւոր Պէյրամ չավուշ տէհզի Սողոմոնէն իր ունեցած երեւակայական (40 մէճիտ) պահանջին համար գիւղին մէջ ընդհանուր վլվուկ մը կը ձգէ, ամէն կողմ ու ամէն տուն խուզարկութիւններ կ'ընէ և վերջապէս դրամը կ'առնէ՝ ամէն տեսակ խժգոնութիւն ի գործ դնելով յիշեալ ազգայինի պարագաներու վրայ: Յիշեալն, մայրը և երկու եղբայրները իրենց վախէն գիշերով կը փախչին Սղերդ, ուր միջոց մը կը մնան մինչև չավուշին Տէհ մեկնումը:

Յ ու ն ի ս 21. — Տեղույս զինւորական բժիշկ փոխհազարապետ Գատրի էֆէնտին մի քանի բարեկամներով մօտակայ կաթողիկոս վանքը կերթայ զբօսնելու: Երբ իրենց օղին կը լմնայ, այնտեղէն անցնող Սողոմոն անուն հայ երիտասարդ մը քաղաք կը ղրկեն: Խեղճ հայուն վերադարձին, ճամբան, մի քանի թիւրքեր վրան կը յարձակին, կը վերաւորեն, ունեցած 7 մէճիտը կ'առնեն: Երիտասարդը սաստիկ կերպով գանակոծւելէ յետոյ կը փախչի: Բայց այս անգամ երկու զինւորական ետեկն կը հասնին և իրենք ալ իրենց կարգին կուշտ մը կը ծեծեն ու ձերբակալելով բանտ կը յանձնեն, պատրակելով թէ թիւրք մը վերաւորած է: Բուն խնդիրը սա է, որ թիւրքերուն հետ ծեծկած միջոցին անոնցմէ միոյն թուր վերաւորած է ընկերին ձեռքի խթանով:

Յ ու ն ի ս 23-ին տեղիս սպանդանոցին մէջ երկու զօրք քէյֆի համար Թովմաս անուն հայ պատանին հրապարակաւ կը պարտաւորեցնեն քոստո քած մը կ'ընելու: Ըսելը այս անսովոր երեւոյթէն կատղելով՝ կը յօշոտէ սղուն ազդրին միսերը:

Յ ու ն ի ս 28-ին տեղէս 2 ժամ հեռի Այնպարան (25 անւոր) և Ճուանիկ (150 անւոր) քրդաբնակ դրացի երկու գիւղերու բնակիչները ընդհարում մը ունեցան միմեանց հետ: Երբ վերաւոր՝ ծանր տեսակէն: Թէև

կառավարութիւնը փութաց խնդիրը քննելու, բայց ոչ որ կրցաւ ձերբակալել:

Յուլիս 29-ին բնիկ թըլօցի և տեղս հաստատուող շէյխ Խալիլի կինը կ'առուանգուի Հէյխ-խալաթ թաղեցիներէն Իօմէրի կողմէ: Հէյխն, որ գիւրագրգիռ բնոյթի տէր է, կը կատող, կը զայրանայ, կը փրփրի և շուկայի հրապարակին վրայ տեղական կառավարութեան, թագաւորին, կրօնքին, մարգարէին բիւր լուտանքներ կ'ուղղէ ի լուր ամենեցուն և նոյնիսկ կը սպառնայ սև թաշկինակ կապել (քահանայ ըլլալ) ի նախատինս իսլամական կրօնքին, բայց ամէն սպառնալիք ապարդիւն կ'անցնի, կինը վերջնապէս ձեռքէն ելած է:

Օ գ ո ս տ ո ս 20.—Այսօր տըհեցի Սարգիս Խաչիկեանի հնձաձ ցորենի շեղջերը (60 քիլէնոց) կ'այրելն անձանօթ չարագործներու կողմէ, գիւղէն մէկ ժամ հեռու:

Օ գ ո ս տ ո ս 21.—Զինուորական մը որ վերոյիշեալ (օգոստ. 20) աղգայինի ախոռին մէջ իր զօրապետին երկու ձիերը պահելու պաշտօնն ունէր, ծեծի տակ կը մեռնէ տանտէրին 400 ղուրուշնոց եղ մը: Զօրապետը հայուն ախոռը իր ձիերուն յատկացուցած, չի թողոր որ տերը անասուն պահէ հոգ:

Օգոստոս 22-ին գողերը գիշերով կը մանեն Յովսէփ Գասպարեանի տունը, դուռը չկրնալով բանալ, տանիքի վրայ գտածնին կը տանեն՝ 1 բրդէ վերմակ, 1 օխա տան կտաւ, 1 քրդական շալվար և մէկ ձեռք երկէ մարդու զգեստ, ամէնը 250 ղըշ, արժողութեամբ, տանտէրը աղքատ մըն է:

Օ գ ո ս տ, 23.—Այսօր Անայ անգլիական հիւպատոսը ՏՏէ հանդիպեր է և երկու օր յետոյ ճիզօէ է անցեր: Թիւրք կառավարութիւնը առաջի այդպիսի մարդոց աւ հոգածու կը գտնուի: Գոմիսէր, բոլիս կը շրջապատեն զայն, զի մի գուցէ հարստահարած ժողովորդէն մէկ մը համարձակի մօտենալ և իր վիշտերը լայ այսպիսիի մը և երկրորդ՝ արթուն կը հսկին թէ մի գուցէ իրենց երկրին գալլ-քիւրդերը վնաս մը հասցնեն օտար տէրութեան ներկայացուցին:

Օ գ ո ս տ, 24.—Արբաշամ Յովսէփեան անուն աղգայինը այգին կերթայ միակ արդիւնքն եղող 7 լիտր չամիչը հաւաքելու, պահապանը՝ Ահմէտ Տահաթ, որուն ագահութիւնը կը շարժի ընտիր չամիչին ի տես՝ կ'արգիլէ զայն, ինչու որ խեղճը վրան դրամ չունէր նոյն ժամուն 5 ղըշ: պահապանողէքը տալու ուստի գործը կը ձգէ յաջորդ օրուան, երբ պահապանը իր մեկնելէն յետոյ ամէն ինչ սրբեր տարեր էր և ինք բնականաբար բան մը չի գտներ տուն կրելու: 2ամիչը առնւազն կ'արժէր 105 ղուրուշ, լիտրը՝ 15-էն:

Նոյն օրը գիշեր Իօմէր Իքրանի տղայը՝ Տէրվիշ և Հասան կը յարձակին ձէմսէրք ասորեանակ գեղին վրայ, կը վերաւորեն մարդ մը՝ Մուրատ անուն և 2-3 անկողին և այլ բաներ աւարի կուտան:

Օգոստոս 24-ին Քարշինի մէջ տեղւոյն գայմագամ Մէհմէտ էֆէնտին ասորւոց Գասապրաիլ անուն չքահանային մատնութեամբ խուճը մը հայ երիտասարդ արհեստաւորներ կը ձերբակալէ իբր քաղաքական յանցաւոր, օր մը վերջ անոնցմէ ոմանք կ'արձակէ և միւս 10 հոգին, առանց նախնական քննութեան մ'անցնելու, շլթալած Ամիթ կը ղըկէ ուղղակի:

(Կը շարունակուի)

ԱՇԽԻՐԹԱԿԱՆ ԿՈՒՒԻ ՄԸ Ի ՊՈԶԹԱՆ

Թանղէ գիւղի աղա էօմէրի եղբօր սպաննութիւնը Մէհմէտ Բէսուրի ձեռքով ժամանակին գրած ենք: Իօմէր աղան տեղս գալով կառավարութեան բողոքեց և չարագործներու պատժելը խնդրեց, և երբ համոզեցաւ որ իր ամէն դիմումներն արժէք չունին, այն ատեն իր անհատական ուժերով եղբօր վրէժն լուծելու որոշում տալով՝ կը սկսի բաւականաչափ զէնք հաւաքել նոյնիսկ պետական զէնքերէն (տեղւոյս զինուորական զինուց մթերանոցէն այս տարի մի քանի անգամ մեծաքանակ զէնք գողցեցաւ, պահապան զինուորները կը ծախեն քիւրդ աշիրէթներու սուղ գնով և յետոյ իբր կորուած կը տուժեն որոշած գնով: Յայտնի է թէ գաղտնի պարագաներու բերմամբ այսօր մեր տեղացի տաճիկներ և աշիրէթները պետական զէնքերով զինուած են գրեթէ ամբողջութեամբ) և գիւղ դառնալով կը հաւաքէ իր կուսակից աշիրէթները, Տէրշու և ուրիշ հինգ զանազան գիւղերու քիւրդերը և հակառակորդին բնակավայր Կովաշէր գիւղին վրայ կը քալէ: Այս վերջինս ալ իր մարդերով կազմ ու պատրաստ ըլլալով՝ արիւնհասեղ կուր մը կը սկսի (օգոստոսի սկիզբները) Մէհլան գիւղին առջև: 24 ժաման կուռոյն մէջ Մէհմէտի մարդերէն 5 հոգի կը սպաննուի, իսկ Իօմէրի կողմէն 7 և հոգի ալ վերաւոր: Թէև Իօմէր աղան կը յաղթուի, բայց իր կուսակիցներէն Տէրշու աշիրէթը իր հետ ուրիշ հինգ աշիրէթ առած, համագումար 2,000 մարդ, դարձեալ Մէհմէտի վրայ կը յարձակի և կ'այրէ ամբողջովն Մէհլան, Պասըխրէ, Ճէտար քրդաբնակ և Թըլամշար 40 տնուր քաղաքանակ գիւղերը և Կովաշէրի մէկ մասը: Կը սպաննուի կին մը և 5 հոգի վերաւոր Մէհմէտի մարդոցմէ: Ասկէ զատ կը թալանեն Կըրէհասանա և ուրիշ երկու քրդաբնակ և Պէնկով քաղաքանակ գիւղերը: Կառավարութիւնը որ Իօմէրին բողոքը լսելով առաջը պիտի առնէր այսքան արիւնհասեղութեանց ու վնասներու և կործանումներու, երկու գունդ զօրքով կը դիմէ կուրի թատերավայրը, Իօմէրի տունը կը թալանեն, կ'այրեն և ընտանիքով ու 10 մարդոցմով ձերբակալով Տըհ կը տանեն, կը բանտարկեն: Իսկ Մէհմէտ աղան, որ առատ կըրծօնով շահած էր կառավարչին՝ իր հետեւորդներու ու երկու գունդ զօրքերու հետ Սթուշքէս կերթան (օգոստ. 20-ին) համիդիէ Մուսթաֆա փաշայի ձամբան բանալու համար, որովհետև ամէն տարւան պէս այս տարի ալ շէրնախիք միակ անցքը գոցած են: Կառավարիչ և զօրք ոչինչ ըրած են ցարդ, Բաղէշէն օգնութիւն կը խնդրեն և օգոստոս 29-ին Ալախիբէկը գունդ մը հեծեալ զօրքով օգնութեան կը հասնի: Հոս ալ մեծ գէպքեր տեղի պիտի ունենան հաւանօրէն:

ԲԱՂԵՇ ՎԻՍՅՅԵԹԻ ՂԱՐՁԱՆ ԳԱՒԱՌԻ ՎԻՃԱԿ

Գաւառիս 3-4 տարւան խուովեալ և տագնապալի վիճակը ծանօթ է ձեզ արդէն: Վերջնապէս դարբնախնամը՝ ձանձրանալով իրեն ուղղած անհասնում սրտակեղիք դիմումներէն ու բողոքներէն՝ այս գաւառակը խաղաղեցնելու, բարեկարգելու իրատ է մը հանած է եղեր: Ասոր վրայ յունիսի մէջերը 5-600 զօրք թմբուկով, արմուկով եկան Ղարղան հարստահարեալը պաշտպանելու և չա-

րագործը պատժելու բարձրագու ռոշումով: Չարագործ աղաները սարսափեցան և իրենցներով անառիկ տեղեր ապաստանեցան, բայց միայն մէկ շաբաթ: Զօրքերը նախ և առաջ իրենցմէ սպաննւած (մայիս 6-ի ընդհարումի մէջ) 3 հոգիներու և յափշտակւած 17 մաուզէրներու վրէժը լուծելու համար կը յարձակին յուլիս 4-ին Ալբրան աշխրէթին Մալատիպ անուն ազգափոխման վրայ, կըսպաննեն անոնցմէ 5 հոգի, կը ձերբակալեն 16 հոգի և կը թալանեն անոնց 1,000 հատ ոչխարները և 100-է աւելի ջորիներ: Մէկ խօսքով անոնց ամէն ունեցածը, չմոռնալով անշուշտ բռնաբարել աղջիկներն և կիներ, սկսեալ 10-էն մինչև 60 տարեկան: Գաւառակին քիւրդ աղաներէ տլըբանցի Օսմանէ Էօմէր և Էօմէր Իսքան բանտարկւած կան այսօր: Իսկ արբանեակներէն նա մամանաւանդ Պշար և իր եղբայրը Ճէմիլ և Ալիէ Էօնուրս, որոնք այսքան տարիներէ իվեր իրենց անցած տեղերուն մէջ ահ ու սարսափ, մահ և աւեր սփռած են ու կը սփռեն, մինչև այսօր իրենց զինեալ մարդիկներով զօրաց քթին տակ կը շարունակեն գիւղէ գիւղ շրջել, դրամ,

պաշար բռնի առնել, մէկ խօսքով թալել գիւղերը: Ասոնց միայն ընդարձակ բնակարանները այրւած են և ասոր համար յիշեալք կառավարութեան տկարութիւնը ծաղրելու մտք լուր կը ղօկեն զօրաց միշտ այսպէս, որինչ կրցաք ընել մեզի, եթէ կտրիճ էք, անգամ մը մեր դիրքերու վրայ յարձակելու քաջութիւն ունեցէք, մեր տներու այրուը մեզի հոգ չէ, ողջ մնան հայերը, ձեր մեկնելէ անմիջապէս յետոյ, քիչ օրւան մէջ աւելի փառաւոր տուներ պիտի կառուցանել տանք մեր Ֆէլահներու ձեռքով ու դրամով: Շատ ալ իրաւունք ունին: Ղարզանի հայերուն վրայ հոգի չէ մնացեր ոչ նիւթապէս ոչ ալ բարոյապէս: Քիւրդերէն աւելցածը զօրքերը կուտեն ու կը յափշտակեն: Անպատկառ կերպով հանդիպած գիւղերուն մէջ ամէն տեսակ լրութիւն, գազանութիւն և թալան կ'ընեն: Հարստացած աշխրէթները զօրքերու շնորհիւ եթէ աղքատացան, ապահով են որ հայերու շնորհիւ պիտի հարստանան յետոյ: Ահա կառավարութեան «բարեկարգութիւն» կոչւած բարերարութիւնները, զոր այսքանտարիներէ ի վեր կը խոստանայ հայերուն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՏԻԳՐԱՆԱԿՆԵՐՅՈՒ ԿՈՒՍԱԿԱՂՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՂ ԳԱՆԱՌԱԿՄՈՆ ՆԵՐՔՈՆ ԱԿՄԱՄՈՆ ԱՆՈՒՍԵՐԵԱ

(Պատմէն, Թիւրքերէնէ թարգմանւած)

(Շարունակութիւն N° 3-ի)

ԸՄԲՈՍՏՈՒԹԵԱՆ ԷՏՏՈՒԱՆՔՆԵՐԸ

Թահիր աղայի Աստուծոյ կամքին և Մարգարէի օրէնքին հակառակ ի գործ դրած փարաւոնեան վարմունքներու և անկարգութիւններու ծայրայեղներէն մին ալ սահետեալն է, որ երբ ուէ գեղեցիկուհիի մասին լուր կառնէ, անպատճառ նորա ամուսինը և եթէ նա դեռ ամուսնացած չէ, նորա հայրը կամ եղբայրը իր մօտ բերել տալով զանազան տանջանքներով և բռնութիւններով զայն փախչելու կամ լռելու կը ստիպէ: Այդ և այլ զանազան միջոցներու շնորհիւ շատ մը աղջիկներ և կիներ լլկած և քանի՛ քանի՛ հրէայ աղջիկներուն կուտութիւնը պղծած է: մինչև իսկ իր տղան նախֆի հարսնիքին առթիւ հաւաքել տւած կառավարական պաշտօնեաներէն, քաղաքի երևելիներէն և ժողովուրդէն բաղկացեալ հազարի մօտ հոծ բազմութեան մը առջև, հրէայ կիները և աղջիկները պարել տւած և գիշերօք ալ տուներին յանկարծակի կոխել տալով շատ մը կիներ և աղջիկներ դուրս քաշել տւած և անոնց վրայ ոչ մի կրօնքի և խղճի առջև արդարանալի վայրագութիւններ կատարել տւած է: Այդ դէպքի հետեանօք է որ քանի մը կիներ իրենց ամուսիններու կողմէն արձակւած ըլլալով խեղճերուն փողոցներու և գիւղերու մէջ թշուառ թափառելուն պատճառ դարձած է:

Իր բոլոր անօրինութիւններէն մին է նաև 5 տարիներէ ի վեր շինութիւնը դեռ չլինցած տուներուն և խանութներուն ատաղճը կայսերական հրամանով քանդուիլ արգիլւած հնութիւններէն մատակարարելը, որու մասին կարժէ որ հոս մի քիչ աւելի բացատրութիւններու մտնեմ, խորապէս համոզւած ըլլալով թէ անոնք մասնաւոր ուշադրութեան և անկեղծ ցաւակցութեան պիտի արժանան:

Քանի որ ճիգը գաւառակը նոյի տապանին հան-

գըստարանը եղած ճուտի լեռան ստորոտը կը գտնուի, պէտք է ընդունել թէ նա ուրիշ քաղաքներէն շատ առաջ շէն վայր մը եղած է, որու մասին արդէն պատմութիւններն ալ կը վկայեն: Քաղաքին շուրջը բարձրացած պարիսպին շինութեանը համար գանձեր վասնւած են: Պարիսպէն ներս կը գտնուին մզկիթներու, աղօթատեղիներու և մէտրէսէներու (ուսուլմարան) պէս շատ մը հնութիւններ, որոնք շատ մը գիտութիւններու աւանդարան և Աստուծոյ անւան փառաբանարան ըլլալովն մէյմէկ սրբութիւններ եղած են: Ահա այս վայրերը օտարազգիներուն ուշադրութիւնն ալ նկատի չառնելով, Թահիր աղայի հրամանով ասոնցմէ հարիւրէն աւելին հիմնայատակ քանդւած են: Այդ ալ բաւական չնկատելով, քաղաքին պարիսպն ալ քանդել տրւած և փլատակներու տակէն դուրս ելած քարտրուն մի մասը ճիգրէի մէջ իր սկսած շինութեան յատկացւած և մի մասն ալ Մուսթաֆա փաշային անապատ գտնուող յատուկ վայրերն փոխադրել տրւած են: Տեսնելով թէ ասոնք ալ իր խոշոր պէտքերուն չեն բաւեր, կառավարութեան պալատին մօտ գտնուող և Միր Համմամը անւամբ ծանօթ նշանաւոր հնութիւն մը և ճիգրէի մէջ պետական ուրիշ հին շէնքերը քանդելով և պեղումներ կատարել տալով նիւթերը և քարերը ամբողջովն իր շինութեան գործածել տւած և տէրութեան շէնքերու մէջ աշխատող գործաւորները, գաւառակի ժողովուրդին մի մասը և անձնական գործերու համար քաղաք եկող գիւղացիները, կարծես հանրային խճուղիներու շինութեան համար եղած ըլլայ, 3-4-ական օրեր ձրիապէս աշխատել տւած է:

Գալով յիշեալ տուններուն համար պէտք եղած տախտակները ինչ կերպով ձարած ըլլալու հարցին՝ Տիգրանակերտ, Հասանքէյֆ և Սալոէն գետի ձաւրով մինչև Մուսուլ և Պաղտատ փոխադրուող բարտի (կաղամախ)

ծառերու քէլէքնեւը երբ ճէգրէի առջևը կը հասնին, ամէն մի քէլէքի (լաստ) գլուխ 5 մէճիտիյէ և 5 հատ ալ ծառ իբր տուրք չառած անցքը արգելած է: Այդ բռնութեան շնորհիւ ճիգրէի առջևէն անցնող 10 հազարէն աւելի այսպիսի ապօրինի տուրքերով բեռնաւորելը՝ Տիարպէքի, Մարտինի, Հասանքէյֆի և Սալօի բնակիչներու բարձրացուցած բողոքներովը և ադէկ խոշոր վնասներու ենթարկուած մարտինցի Կէօզիզատէ Ապտիւլգատիր փաշայի, Մարտինի իտարէի ժողովի անդամ Իսմայիլ Հագգը էֆէնտիի և Սալօէն Համտուլլահ պէկի և այլ վաճառականներու դիմումներովը՝ հաստատուած իրողութիւն մըն է: Դարձեալ ասկէ երեք ամիս առաջ Հասանքէյֆէն եկող բազմաթիւ քէլէքները ամբողջովին գրաւելով, անոր մէջ ծառայողներն ալ կառավարական շէքի արտաքնոցներու մէջ 25 օր բռնի բանտարկել տուած է: Եւ դարձեալ աղայէն կրած հարստահարութիւններու և կեղեքումներու երեսէն Պասպէրթ գիւղի մէջ գտնուող գոյքերը և կահ կարասիքը և իրշատիյէ դպրոցները և թէքքէին յատուկ վագֆերը և գոյքերը թողով Տիարպէքի գաղթած պասպէրթցի շէյխ Խալիտի որդին ուսումնական և ուղղահաստ շէյխ Հիւսէյնի թէքքէին պատկանող 6,000 զուրուշ արժողութեամբ բարտինները, երբ Մուսուլ կ'անցնէին, զանոնք բռնի իւրացուցած ըլլալը դատարանի արձանագրութիւնով յայտնի է:

Վաճառականական ապրանքներ փոխադրող միւս քէլէքներն ալ ճիգրէի առաջ Թահիր աղայի կողմէ և Փէնխապուր գիւղի առջև ալ աշերէթ քիւրդերու կողմէն կրկին անգամ ամէն մի քէլէկի գլուխ հնգական պարկ շաքար կամ ուրիշ ապրանքներ և 15-ական մէճիտ տուրք կը գանձին: Մուսուլի բեռնակիրներու պետ խալիտի Տիգրանակերտէն փոխադրած հազար ոսկի արժողութեամբ ցորենի քէլէքները Թահիր աղայի կողմէն կողպուած ըլլալուն, ապրանքին տէրը երբ ճիգրէ գալով բողոքել ուզեց, բայց իմանալով թէ այդ պարագային մարդասպանութեան ոճրի մը ամբաստանութեան տակ դատի ենթարկել պիտի տայ, խեղճ մարդը վախուն գիշերօք Մուսուլ խոյս տուաւ: Մինչև իսկ 315 թւականին (1892-ին) ցամաքի ճամբով Պաղտատ ճամբորդող գերմանական պետութեան հպատակ երկու անձնաւորութիւններ՝ Փէնխապուրի մօտերը Մուսթաֆայ փաշայի մարդիկներու կողմէն յարձակում կրելով անոնց երկու հատ մաուզէր հրացանները և մէկ հեռագրիտակը կողպուեցան: 316 (1900) տարւայ կիսուն ճիգրէէն Մուսուլ գացող երկրագործական պանգային քննիչ Ապտիւլ Հալիմ Հիլմի էֆէնտիին գտնուած քէլէքը ճիգրէէն մէկ ժամ հեռաւորութեամբ Բիւպհանի գիւղին առջև Մուսթաֆա փաշայի մարդիկներէն Հաճը Թըպթի կողմէ բռնելով 5 գլուխ շաքար և անոր ընկերացող միւս քէլէքներէն ալ նոյնանման ապրանքներ առնելէ յետոյ, յիշեալ քննիչէն դարձեալ մէկ ոսկի և 2 մէճիտիյէ շորթած, անոր քովը գտնուող էսթէյի Բպրահիմն ալ սաստիկ և քննիչ էֆէնտիին նկատմամբ ալ շատ մը նախատական և անարգալի վարմունքներու մէջ գտնուած են:

Թահիր և անոր եղբայրը Քաթթահ հողաներուն և անոնց զաւակներուն թէ գասապի և թէ գիւղերու մէջ ազգաբնակութեան նկատմամբ ի գործ դրած տեսակ տեսակ կեղեքումները և բռնութիւնները, թալան և խոշտանգումները՝ բռնակալ հաճըներուն ժամանակին կատարած պատմական ծանօթ արարքներն ալ մոռցնել

տուած է, և ինչպէս որ տէրութիւնները իրենց ապահովութեան տեսակետով գաղտնի ոստիկաններ կը կարգեն, նոյնպէս ալ ատոնց լրտեսներու վախէն հարստահարեալ ժողովուրդը և յուսահատուած պաշտօնեաները իրարու դէմ ցաւերը լալու համարձակութիւն ալ կորսնցուցած են, այն աստիճան որ կինը իր ամուսնոյն և հայրը իր զաւակին հետ այդ մասին խօսք մը, բառ մը արտասանելու կը քաշին: Ուէ իշխանութեան կամ պաշտօնիայի անոնց դէմ բողոք բառնալու կարողութիւնը վերջնականապէս վերցած ըլլալով ամէն ոք գուրանի ծանօթ նւիրական պարբերութեան վսեմ պարունակութիւնը մտաբերելով, սարսափէ ընդարմացած և իրենց ինչքով կեանքով և անոնցմէ աւելի նւիրական, իրենց պատուով այս բռնապետներուն ափին մէջ ոչնչանալու դատապարտուած են:

Եթէ այս մարդիկներուն ցարդ կատարած բոլոր չարիքներուն միբարամիջէ մանրամասնութեան մասնել պետք ըլլայ, խոշոր հատոր մը պիտի կազմէր: Բայց մտածելով որ ասիկա պետական անձնաւորութեանց ձանձրոյթ և աւելի վիշտ պիտի պատճառէ, հետեւաբար յարմար դատեցի զանոնք համառօտել ըստ գուրանի սա նւիրական պարբերութեան, թէ «խօսքերու լալը կարճն է», և նկատելով որ ներկայ գրութեամբս գլխաւոր նպատակներէս մին եղած է «պէյթիւլ մալը միւսլիմ»-ին (խլամներու հասարակական գանձ) ցաւալի և ողբալի կերպերով վնասներու, կողոպուտներու մատնուած ներկայ վիճակը պատկերացնել, մի բան որ ինծի կը հրամայէ իմ կրօնքս, իմ խիղճս և պետական պաշտօնիայի հանգամանքս, հետեւաբար համարձակութիւնը պիտի ունենամ հոս պետական գանձուն վերաբերող հարցերուն և ատոնցմէ ալ անուղղակի ժողովորդին համար ծագում առած չարիքներուն և զրկանքներուն մի քիչ աւելի մանրամասնութեանց մտնելու:

Գ Ա Ն Ձ Ո Ւ Ն Վ Ն Ա Ս Ն Ծ Ր Ը

Թահիր աղան շնորհիւ իր բռնապետական արարքներու, որոնք միահեծան և բռնակալ իշխանութիւններու մինակ յատուկ են, գազային ներսը և դուրս իր իշխանութեան տակ առած գանձուն հասոյթները իր բռնութեան գործիք դարձուցած է. իր այս սովորական ընթացքին համեմատ Քաղքին շրջակաները գտնուող Հասնան և Մամօն համայնքին սեփական 50-էն աւելի շէն գիւղերուն ոմանց տուրքերը իր կողմէ վճարելու և թափուն իր անւանը անցնելու պայմաններով ոմանց կեղծ ձեւակերպութիւններով և ոմանց ալ բռնի կնքուած պայմանագրութիւններով ամբողջովին տիրացած է:

Այս գիւղերու բնակիչներէն բերբերու վոյ հարիւրին քսան տասնորդական տուրք գանձելէ գատ, թահալաթի պատրւակով կառավարութեանէն իր քովը 5-6 ժամտարմներ և ոստիկաններ առնելով, գրութեանս «ներկայ հարստութեան քանակութիւնը» բաժնին տակ մատնանիշ ըրածս իր ծառայարբանեակներով գիւղացիներու վոյ բռնութիւններ կատարելով հարկ և զինւորական տուրք անւամբ դրամներ կը հաւաքէ, որոնք ամբողջութեամբ, առանց գանձուն մտնալու, իր քովը կը մնան, և այդ կերպով՝ այն հարկերը, որոնք ժողովորդէն գանձուած են դարձեալ անոնց անւան պետական տոմարներու մէջ պագիյէ կ'երևին:

Այս համայնքներու ոչխարները համբելու պաշտօնին ամէն տարի իր եղբօրորդին Մէհմէտ Արապ գրագրութեան իր ծառաներէն Մէհմէտ Իմին և գօլճուութեան

(Տնտեսական) դարձեալ իր ծառաներէն մէկը կարգել տարով, ամէն մի գիւղէն տարեկան այս տուրքին կրկինը բռնութեամբ կը գանձէ: Օրինակի համար մարդու մը անւան որչափ ոչխար արձանագրած է ամբողջ տուրքը կը գանձէ, բայց գանձած դրամը փոխանակ այն մարդու անւանը գրելու՝ երեւակայական և անծանօթ անձերու անւան տակ արձանագրել կուտայ: Այդ կարգէն ըլլալով հաստատուած է որ Ճիգորէի Հասան ԱՏՄէտ աղայի անւան, որ մէկ հատ ոչխար անգամ չունէր, 2,500 ոչխար գրել տուած է, մինչդեռ նոյն անձը աղայէն կրած հարստահարութիւններու հետեւնքով իր ընտանիքով վարդուց Տիպրանակերտ փոխադրուած էր: Անոր յարուցած բողոքին վրայ տեղի ունեցած պաշտօնական բանակցութիւններով թէև ճշմարտութիւնը երևան եկաւ, բայց և այնպէս 2,500 ոչխարի տուրքը իբր պագըլէ կը մնայ դեռ:

Ահա այսպիսի կեղծ ու խարդախ արարքներով և ի հարկին բռնութեամբ այս համայնքներուն ամբողջ ոչխարի տուրքերը, որոնք դեռ պագըլէ կ'երևին, հաւաքած և գիւղացիները իրեն մէկ մէկ կ'ընեն-կով դարձուցացած է: Ոչխար համբերու այդ եղանակէն ծագում առած քանի քանի դատերը իր հայեցակէտով վճռած, քանի քանի մարդիկները կապած և քանի քանիներուն գոյքերն ու դրամները իւրացուցած է:

3) Գազայի աշարի (տասանորդի տուրք) աճուրդը անհրաժեշտօրէն Քասիբ և Քաթթաճ աղաներու և Մուսթաֆա փաշային փոխանորդը Ապտուլահաճ աղային ներկայութեանը կը կատարուին: Արդ եթէ գտնուին նիւթական կարողութեան տէր մարդիկ, որոնք փափագին գազային աշարը մինչև վեց հազար ոսկիով իլթիզամ (վճանին առնել) ընել, բայց աղաներու վախէն երբէք չեն համարձակիր անոնց առջև աճուրդին մասնակցելով գինները բարձրացնել, հետեւաբար աճուրդը միշտ կը գոցուի ինչպատ աղաներու շահերուն, և շատ մը գիւղերու աշարը իրենց իսկական արժէքէն չափազանց վար գներով աղաներուն և անոնց զաւակներուն անւան կ'անցնին: Այսուամենայնիւ այդ կերպով ապահովուած շահերն ալ աղաներու կողմէ անբաւական տեսնելով, շատ մը գիւղեր կեղծ կնիքներով կնքուած գափմէներու (աճուրդի յատուկ թուղթ) վրայ ասոր անոր անւանը և անոնց անգիտակցութեամբ անցնել կը տրուին, և իբր թէ այդ գիւղերուն իլթիզամն ալ իրենք ստանձնած ըլլան իրենց շահաներու (չափող) ձեռքով և իրենց հսկողութեան տակ չափելու գործողութիւնը երբ կ'աւարտի, Քաթթաճ աղայի որդիները Մէհմէտ Արաբի և Ապտուհ, և Ապտուլահաճ աղայի որդիները Ապտուլքէրիմի և ապտուլահաճի քով 10-ական զինեալ ծառաներ տարով գիւղերը կը ղրկեն, որոնք թէ այս վերջին գիւղերու և թէ իրենց անւան արձանագրուած գիւղերու արմտիքներուն ամէն մէկ տասը չափէն մէկ թափուի, երբք՝ տասանորդի և դարձեալ մէկ ալ իբր շահնախ, ծառայի և այլ վարձքի անուններով իրաւունքներ կը վերցնեն և խուտրէվաթի (կանանչեղէն) իրաւունքն ալ իրենց ուզածին պէս կը դնահատեն և կը գանձեն: Գարով գիւղացիներու անւան մնացած գիւղերու տասանորդի տուրքերուն *), քանի

որ կառավարութեան կողմէ գանձուած պահուց անոնց ծառաներուն ներկայութիւնը անհրաժեշտ պայման մը դարձած է. հետեւաբար ինչ որ կը գանձուի նախ Քասիբ աղայի կը յանձնուի ու այդպիսով պետական գանձուն հինգ փարա չմտնելով ամբողջութեամբ աղային անձնական գանձին կը մտնէ եթէ արտակարգ պատճառներով գիւղացուց վրայ անվճար պահանջներ մնացեր են, ասոնք միայն գանձին տոմարներու մէջ պագըլէ կ'երևին: Ահա պետական գանձուն ներկայ վիճակը, որուն կը վկայեն ջախջախիչ շատ մը փաստեր և պաշտօնական արձանագրութիւններ:

(Կը շարունակուի)

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Յ Ը Ի Տ Ա Լ Ի Ա Յ Ո Ւ Ս
(ՆԱՄԱԿ ՄԻՆԱՆՈՅ)

Կիրակի օր, ապրիլի 26-ին, բաղաբիս «Ֆոսատի» կոչուած ժողովրդական թատրոնում տեղի ունեցաւ հրապարակական մեծ ցոյց՝ ի նպաստ հայերի և մակեդոնացիների: Հաւաքուած էր մեծ բազմութիւն — 4,000-ի չափ — հասարակութեան բոլոր խաւերից, քաղաքական բոլոր կուսակցութիւններից — սօցիալիստ, դեմոկրատ, հանրապետական, կաթոլիկ-կղերական:

Կարգադիր յանձնաժողովը, որ կազմուել էր քիչ առաջ յայտնի արմատական հրապարակագիր Մօսետայի նախագահութեամբ՝ հրաւիրել էր այդ միտինգին ատենախօսելու՝ Պիէռ Կիառին, հայերի կողմից, և Միմօն Բադէվին, մակեդոնացիների կողմից: Իտալացիներից խօսեցին՝ Մօսետա, Պիտարդի, Տուրատի, Միչելի, կաթոլիկ քահանայ Աբրէզիլի և ուրիշները: Յայտնի պրօֆէսորներ, սենատորներ և ուրիշ քաղաքական գործիչներ նամակներով ու հեռագիրներով յայտնել էին իրենց համակրութիւնները: Համակրութեան հեռագիրներ ուղարկել էին նաև «Իրօշակ»-ի և «Աիչերնայա Պօչտա»-ի խմբագրութիւնները:

Մօսետա պարզեց միտինգի նպատակը. «Միլանի հասարակութիւնը, ասաց նա, պէտք է ցոյց տայ իր եղբայրական համերաշխութիւնը արիւնաթաթախ ազգերի նկատմամբ. Հայաստանի և Մակեդոնիայի հազարաւոր զոհերի աղաղակները պէտք է արձագանք գտնեն իտալացիների սրտերի մէջ, որոնք դեռ յիշում են օտարի դառն լուծը: Մեր սուրբ պարտականութիւնն է՝ հաւաքական ուժերով և ամենաեռանդուն կերպով միջամտել յօգուտ տառապեալ ու հեծեծող ազգերի: Արանչելի մի պատկեր է, երբ տեսնում էք թէ ինչպէս մի ժողովուրդ ընթանում է դէպի իր ազատութեան նւաճումը. բայց աւելի ևս սքանչելի է, երբ արդէն ազատուած ու անկախ ժողովուրդները օգնութեան ձեռք են մեկնում ճնշուած ժողովուրդներին, որոնք անկարող են իրենց սեփական ուժերով ազատուել լծից: Ահա թէ ինչ պէտք է անել Հայաստանի համար, ահա թէ ինչ է սպասում Մակեդոնիայի ազգաբնակչութիւնը... Հայերը մտածում են, որ Բեռլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների համաձայնութեամբ միայն իրենք կարող են ազատուել թիւրքական լծից»:

Պիտարդի ուրազածեց հայոց հարցի պատմութիւնը, յուզուած շեշտերով պատմեց հայկական աղետները: Դարձաւ պատմութեան և նկարագրելով տաճիկների կատարած ջարդերը զանազան ժամանակներում՝ ցոյց

*) Կը պատահի երբեմն որ աճուրդի ատեն մէկ կամ մէկ անկէ գիւղերու աշարի իրաւունքը գնողներ չեն գտնուել և կամ կառավարութիւնը տրուած գինը նւազ գտնելով չուզեր միւլթիզամի մը յանձնել: Այդպիսի գիւղերու տասանորդ տուրքը կառավարութեան կողմէ ուղղակի կը գանձուի: ԹԱՐԳՄԱՆԻՉ

տեց, որ ջարդի ու աւերումի քաղաքականութիւնը աւանդական է Տաճկաստանում: Սնշուշտ, մեր պարտքն է, մարդկութեան պարտքն է՝ բողոքել ոչ միայն սուլթանի ոճիրների դէմ, այլև եւրոպական պետութիւնների, որոնք չուզեցին իրագործել տալ խոստացած ռէֆորմները... Նախ քան ցրւելը, մենք պիտի պահանջենք մի օրակարգով որ վերջ դրւի այն վարձուրելի կոտորածներին, որոնք տեղի են ունենում մի խենթ ու խայտառակ սուլթանի շնորհիւ:

Բեմ է դուրս գալիս «Պրօ Արմէնիա» ի խմբագրապետ՝ Պիէռ Կիառ, որին դիմաւորում են որոտագին կոչերով. «Կեցցէ՛ Քրանսիան»: Ազեկորութեանը չափ չկար: Վիառ ցաւ յայտնեց, որ Քրանսիս դը Պրէսանսէն՝ հակառակ իր ցանկութեան՝ անկարող եղաւ անձամբ Միլան գալ և մասնակցել ժողովին: Գիւանագիտական դօկումենտների վրայ հիմնելով՝ մեր սիրելի բարեկամը մի առ մի պատմեց մեծ ու փոքր կոտորածները և ծանրացաւ մասնաւորապէս ներկայ վիճակի վրայ: «Աւրախալի է տեսնել որ իտալական վաճառուն սրտերը ներդաշնակ բարախելով եղբայրակից Քրանսիացիների հետ՝ բողոքում են այդ սոսկալի ոճիրների դէմ: Հայկական խնդրի լուծման եղանակի մասին խօսելով, շեշտեց եւրոպական հսկողութեան անհրաժեշտութեան վրայ: Անհրաժեշտ է երեք ռամկավարական երկրների — Քրանսիայի, Անգլիայի և Իտալիայի — համերաշխ գործակցութիւնը Արևելքում, ինչպէս այդ եղաւ Վրէտէի խնդրում: Այդ երեք պետութիւնների մէջ հանրային կարծիքը կարող է ուժեղ կերպով ազդել կառավարութիւնների վրայ և այդպիսով Հայաստանի և Մակեդոնիայի խնդիրները կարող են լուծուել առանց պատերազմի, առանց արիւնհեղութիւնների»:

Վիառ վերջացրեց բուռն, որոտընդոտ ծափահարութիւնների մէջ:

Նրան հետևեց Միլանի հրապարակագիր Միչէլի: Ճառերը էական կէտերով նմանում են իրար — երկար չենք կանք առնում: Հոնտորը, հակառակ իր թախանձանքներին, յաճախ ընդհատում էր ծափահարութիւններով: Նա համակրութեամբ յիշում է հայկական կուրի մի քանի էպիզոդները — Զէյթունի ապստամբութիւնը և Էդհէմ փաշայի ամօթալի նահանջը, Բանկ Օտտոմանի գրաւումը և այլն: Սուլթանը աւազակներից գնդեր է կազմում, որոնք փարա չեն ստանում և անօթի մնալով՝ ստիպւած են կողոպտել...:

Միչելի դառնում է իտալացի հռչակաւոր յեղափոխական Մաձինիի ծրագրին, որը ասում է.

«Բալկանեան նահանգների համար հարկաւոր չէ միապետական ռէժիմ, ինչպէս ուզում է ռուսաց ցարը, և ոչ էլ մի խուճը թագակիրներ, ինչպէս փափագում է Աւստրիան, այլ մի տեսակ արևելեան Զւիցերիա»:

Խօսեցին այնուհետև սօցիալիստ Տուրատի, բելգիացի հայասէր Լօրան, որ ներկայ էր անցեալ տարի Բրիւսէլի համաժողովին, և քահանայ Աերչիգի: Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում այդ վերջինի ճառը:

«Զափաղանց ուրախ եմ, ասաց նա, մասնակցել այս բազմամարդ ժողովին քաղաքական հակառակորդներու հետ, որոնց հետ թէև ամենօրեայ պայքարի մէջ ենք, սակայն ամենասերտ կերպով համերաշխ ենք՝ մարդկային արդարութեան գաղափարը առաջ մղելու համար: Քաղաքականութիւնը բաժանում է, իսկ լուսաւորութիւնը միացնում: Պէտք է, որ մեր երկրի բոլոր կուսակցութիւն-

ները, բոլոր խղճամիտ մարդիկ զբաղեն արտաքին քաղաքականութեամբ. պէտք է ամէնքս միանանք՝ բողոքելու թագակիր աւազակի դէմ, որպէս զի նա դարձարէ ներկել իր խարխուլ գահը մարդկային միրուած կամ չմիրուած արիւնով: Երբ մի մարդ սպանում է միւսին, եթէ մենք ձայն չբարձրացնենք, ուղղակի մասնակից կը լինենք ոճրագործութեան»:

Մեր ընկեր Լօրիս Մէլիքեան, որի նախաձեռնութեամբ կազմակերպւել էր միտինգը, հակիրճ ու զգացած խօսքերով ի տես դրեց հայ ժողովուրդի ներկայ անգէն ու անպաշտպան վիճակը, որ կարօտ է քաղաքակիրթ ազգերի օգնութեան. ապա սրտագին շնորհակալութիւն յայտնեց այն բոլոր համակրելի իտալացիներին, որոնք անմիջապէս և այնքան ջերմութեամբ արձագանք էին տւել իր հրաւերին: Մեր ընկերը ճառի սկիզբն ու վերջը արժանացան երկարատև ծափահարութիւնների:

Մակեդոնացիների կողմից խօսեց Le Mouvement Macedonien-ի շնորհալի խմբագիր՝ Սիմօն Բարէզի:

«Եւրոպան զգաստանում է, ասաց նա. երէկ Քրանսիան էր, այսօր Իտալիան է, որ իր ձայնն է բարձրացնում յօգուտ արևելքի հարստահարածների: Մակեդոնացիք պահանջում են Եւրոպայի հաւաքական հսկողութիւն. այդ է նրանց պահանջների ծուծը: Մակեդոնիան ուզում է մնալ թիրբբական նահանգ, միայն թէ երաշխաւորեն օրէնքի գործադրութիւնը: Մակեդոնացիք հաւատ ունեն Եւրոպայի վրայ, բայց աւելի կը կրթին իրենց սեփական ուժերի վրայ: Նրանք որոշած են ուժով նւաճել իրենց ազատութիւնը և նրանք պիտի անեն յեղափոխութիւն, որքան էլ մեծ աղետներ առաջանան դրանից»: (Բուռն ծափահարութիւններ):

Խօսեցին նաև Corda Fratres ուսանողական ընկերութեան պատգամաւորը և մի անիշխանական, որոնք իրենց ջերմ համակրութիւնը յայտնեցին Հայաստանին ու Մակեդոնիային:

Ահաւասիկ այն որոշումը, որ ընդունւեց միաձայն և անվերջ ծափահարութիւններով.

Միլան, 26 ապրիլ 1903 թ.

Միլանի քաղաքացիները, հաւաքւած ներկայ ժողովում, բոլոր քաղաքական կուսակցութիւնների կամքով՝

Յուզւած այն հրէշային ոճիրներից, որոնք կատարւել են Հայաստանում ու Մակեդոնիայում և որոնք մի սոսկալի անարգանք լինելով՝ մարդկայնութեան զգացումի համար, միաժամանակ մի ծաղր են ուղղւած միջազգային դաշինքներին, որոնք սրբագործւած են հանդիսաւոր կերպով՝

Միանում են իրենց հոգու բոլոր ուժով այն բողոքներին, որոնք բարձրանում են քաղաքակիրթւած աշխարհի բոլոր մասերից՝ ընդդէմ այն անարդարութիւնների, որոնց մատնում են այդ երկրներին.

Ջերմ բաղձանք են յայտնում, որ իտալիայի կառավարութիւնը հաճի մասնակցել շուտընդփոյթ ու կորովի կերպով այն պայմանների իրադրութեանին, որոնց զօրաւորութիւնը չբացնում է ամէն հիասթափութիւն»:

Շարժումը ի նպաստ երկու ժողովուրդների չէ սահմանափակւում միմիայն Միլանով: Մեր ընկերը նախաձեռնութեամբ կազմել են յանձնաժողովներ նաև Հռոմում ու Տուրինում, ուր անցեալ օր խօսեց Պիէռ Վիառ: Միլիթարական է տեսնել, որ իտալացիք չափազանց ձուռ են ընդունում իրենց սրտին հայ ժողովուրդի

դատը և Միլանում տեղի ունեցած հոյակապ միտինգի որոշումը Յանձնաժողովի միջոցով այսօր արդէն հաղորդուած է ի գիտութիւն արտաքին գործերի մինիստրի:

Հոռովում գումարեց մի ժողով ուր ներկայ էին ամենականաւոր քաղաքացիներ: Այդտեղ էր և Ֆրանսիայի հռչակաւոր գրողը «Պրօ Արմէնիա» խմբագրութեան անդամ, Անատոլ Ֆրանս, որի մասնակցութիւնը մի առանձին փայլ էր տալիս ժողովին: Առաջ ենք բերում քաղաքացիներին նրա գեղեցիկ ճառը, որ հրատարակուած է «Տան»-ի մէջ.

Տիկիներ և պարոններ,

«Եթէ ես պատիւ ունեցայ այստեղ ձեր շարքերում գտնուելու, եթէ ես կանչուած եմ միանալու Ձեր ակումբի այս դահլիճում Հոռովի հրապարակասեններին, — ես գալիս եմ իբրև խմբագիր «Պրօ Արմէնիա»-ի, շատ փոքրիկ մի թերթի, խղճով պաշտպան մի մեծ դատի, որ հիմնել է Պարիզում Պիէռ Կիսա՝ Ֆրանսիս դը Պրէսանսէի, Ժօնէսի և Վլէմանսոյի աջակցութեամբ: Եւ իմ առաջին քաղցր պարտականութիւնն է՝ ողջունել յաւիտենական Քաղաքի իմ պաշտօնակիցներին: Ապա թող տւէք ինձ ասել, պարոններ, որքան ես սիրում եմ Իտալիան և որպիսի յարգանք է ներշնչում ինձ Հոռովը: Այն կարճատև ժամերի մէջ, որ կարողանում եմ անցնել այստեղ, ես ճաշակում եմ աննման բերկրանքներ...»

«Իհտեղով ձեր հիւնաւոր յուշարձանները՝ մի Ֆրանսիացի իրեն օտար չէ գգում ձեզ մօտ... Երբ անցնում եմ ձեր համբաւաւոր փողոցներով ու հրապարակներով, ամէն վայրկեան ես տեսնում եմ հեռքերը փառքի և զօրութեան: Բայց բոլոր յիշատակներից ամենասքանչելին թերևս այն խաղաղարար ժեստն է, որով ձեր Մարկ-Օրելը Կապիտոլի բարձրութիւնից ամոքում է բարբարոսներին:

«Համարեայ միևնոյն ժեստն է, պարոններ, որ դուք եկել էք անելու այստեղ: Անտարակոյս, դուք չէք կարող թագաւոր փիլիսոփայի պէս ձեր ձեռքը տարածելով խաղաղացնել տիեզերքը: Բայց վերջապէս դուք եկել էք աշխատելու այս դահլիճում, եւրօպական խաղաղութեան համար, ձեր ուժերի համեմատ, որոնք փոքր չեն, քանի որ նրանք մտքի ուժերն են: Այստեղ միմիայն յօշոտուած Մակեդոնիայի և նահատակ Հայաստանի խնդիրները չեն, այլ պէտք է առաջ բերել բարոյական միացում և մտաւոր համերաշխութիւն քաղաքակիրթ Եւրօպայում: Ձեր մարդաբանական դպրոցի տեսուչ, հռչակաւոր պրօֆէսոր Սէրլի ասաց քիչ առաջ ամենավսեմ խօսքերով թէ ինչպէս հայոց դատը հրապարակ է բերուած Եւրօպայի բոլոր մայրաքաղաքներում: Այս ձեռք նա ներկայացուց Գարիգոլում: Իմ երկրի մէջ բաժանուած այսօր երկու կուսակցութիւնների միջև, որոնք մարանչում են կատաղօրէն, ամենաթունոգ հակառակորդները միացել են՝ պաշտպանելու հայոց դատը...»

«Սրտի մարդկանց այդ միութիւնը — մի անհրաժեշտ ու վեհանձն գործ կատարելու համար — նոյնքան դիւրութեամբ կը կայանայ և ձեր մէջ, պարոններ... Եւ այն ժամանակ զուր իղձեր չէ, որ կը ձևակերպւին, ապարդիւն գանգատներ չէ, որ կ'արտասանւին: Ձեր պահանջը, ինչպէս մերը, որոշ է, օրինաւոր, գործնական, դա լիակատար կիրառումն է Բերլինի դաշնագրի...»

«Հանրային կարծիքը մեծ ուժ է: Մեր ժամանակում, Եւրօպայի մի մասում, նա ուժերի մեծագոյնն է: Իտա-

լիայի հանրային կարծիքը միանալով ուրիշ քաղաքակիրթ ժողովուրդներին՝ կարելի է յուսալ, որ այդ միացած ձիգերով կը հիմնւի միջազգային իրաւունքը...»

Ժողովը յանձնարարեց պրօֆէսոր Սերլիին՝ նշանակել մի կօմիտէ, որը շատ կարճ միջոցում պիտի կազմակերպէ մեծ միտինգ՝ «Հայաստանի և Մակեդոնիայի համար»:

* * *

Ահա այն հրաւերը, որ Միլանի Յանձնաժողովը փակցրել էր քաղաքի պատերին, միտինգի գումարման նախընթաց օրը.

Քաղաքացիներ,

«Մի տէրութիւն, որ վատ միջնորդ է Ասիայի եւ Եւրօպայի միջև, մատակարարում է մեզ այսօր իր բարբարոսութեան սոսկալի տեսարանը՝ թէ իր արեւելեան սահմանի վրայ — Հայաստանում, եւ թէ արեւմտեան սահմանի վրայ — Մակեդոնիայում:

Չարքերը եւ նահատակութիւնները, որոնց մասնուած է Հայաստանը, դիշատիչ եւ վայրագ հորդանքի բործ են՝ ներառուած մի շարքում արտօնութեամբ, մինչդեռ Մակեդոնիայի վրայ ծանրանում են գաղանային հալածանքներ՝ ուղղուած ապստամբութիւնների դէմ, որոնք ծագել են չնորհիւ կառավարութեան իրօք անուր անկարգութիւնների:

Այն հանդիսաւոր պարտաւորութիւնները, որ սուլթանը ստանձնել է եւրօպական դիւանագիտութեան առջև՝ պիտի վաղուց ստիպէին թիւրքիային՝ սանձահարել այդ վայրագ հորդանքներին եւ դարմանել իր յոռի կառավարութեան հետեւանքները: Սակայն այդ պարտաւորութիւնները վերածւել են միշտ մի սոսկալի հեղնութեան:

Եւրօպական դիւանագիտութիւնը, որ տարբեր շահերի պատճառով տարուբերում է միշտ, չի գործ դնում իր կողմից բաւականաչափ ճնշում օսմանեան կառավարութեան վրայ եւ կարծես արդէն նրա խաղաղքը դառնալու վրայ է:

Սակայն քաղաքակիրթուած ազգերի զգայութիւնը՝ ապրտամբում է միշտ աւելի կորովի կերպով թիւրքիայի գործած դարձանքների դէմ: Ժամանակակից քաղաքակիրթութիւնը միշտ աւելի եւ աւելի սերտ եղբայրական յարաբերութիւններ է հաստատում ազգերի միջև եւ սարսափի ու զզանքի զգայութիւնը, յարուցւած որոշ հրէշութիւններով, չի մնում այլեւս փակուած մտքի մի ամուլ շարժման սահմաններում: Մենք զգում ենք, որ մենք համարեայ միակակից կը լինէինք ուրիշ գործած ոճիրներին, եթէ մտանայինք առաջադրել նրանց համար դարման: Մենք մեր մէջ իրաւունք եւ պարտաւորութիւն ենք զգում ապստամբել սմէն մէկի դէմ, յանուն նահատակուած մարդկութեան:

Քաղաքացիներ, այդ պատճառով է, որ քաղաքակիրթ մարդկանց մէջ բարձրանում է, յանուն չարչարուած մարդկութեան, բողոք միշտ աւելի անաւոր, որի նպատակն է ստիպել Եւրօպայի կառավարութիւններին միջամտել յօգուտ հայերի եւ մակեդոնացիներին, որոնք ընկնում են թիւրքական գաղանութիւնների եւ սոսկալի վայրագութիւնների առջև:

Բողոքը պիտի լինի այնպէս միահամուռ եւ այնպէս ուժեղ, որ այլեւս ընդհատուին ձգձգումները, լռեն դիւանագիտութեան անհամաձայնութիւնները: Քաղաքակիրթ կառավարութիւնների միահամուռ կամքը կը դառնայ յետագայում այնպիսի մի պահանջ, որ Տաճկաստանը կը սանձահարւի ընդմիշտ եւ այլեւս անհրաժեշտ չի լինի դիմել գերագոյն միջոցին:

Քաղաքացիներ, այդպիսով մի ճշմարիտ խաչակրաց արշաւանք է քարոզուած՝ քաղաքակիրթութեան ընդդէմ բարբարոսութեան: Այդպէս է ուղում մարդկութիւնը՝ Պէտք է, որ Իտալիան միանայ այս սուրբ դրօշի շուրջը, որ Միլանը փողփողում է իր բոլոր պայծառութեամբ:

խաղաղահամ շարքերի մէջ: Դուք կը լսէք խաղաղի եւ օտար պերճախօս հռետորների, որոնք կը դարգացնեն նոյն մտքերը, որ մենք յիշեցինք. հրաւիրելով ձեզ մեր ժողովին: Ոչ մի կուսակցական տարածայնութիւն չի բաժանում մաղ այդ կէտում: Եկէ՛ք բոլորդ:»

Հետևում են բազմաթիւ ստորագրութիւններ՝ պարլամենտի անդամների, սենատորների, գրողների և այլն:

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

* * *

Temps-ի թղթակիցը «Սարսափելի եղելութիւն» վերնագրով մի նամակի մէջ հետևեալ մանրամասնութիւններն է հաղորդում Սալոնիկի վերջին անցքերի և Բանկ Օտոմանի աւերման մասին.

«... Յիսուսի չափ դաւադիրներ մի բնակարանի տանիքներից և հարևան պանդոկի լուսամուտներից ուռմբերի մի ճշմարիտ հեղեղ էին թափում, ձգտելով ամէն կերպ արգելել ունէ օգնութիւն այդ հիմնարկութեանը (Բանկ Օտոմանի մասնաձիւղը), որ որոշել էին անպայման կործանել: Մօտ երեսուն ուռմբի պայթիւն լսեցին այդ տեղում: Պատերից մէկը փլեւելով՝ չորս զո՛հ տւեց, որոնցից երկուսը — մէկ իտալացի և մէկ շվեյցարացի — մեռան, մի անգլիացի՝ ծանր, մահացու և մի գերմանացի՝ թեթեւ կերպով վիրաւորած է:

«Այդ վիճակի դիմաց՝ ընդհանուր կառավարիչը հրաման տւեց ժանդարմերիայի զինաւորին՝ կոտորել անմիջապէս բոլոր կասկածելիներին: Իսկ թիւրքի համար այժմ ամէն մի բուլգար կասկածելի է: Սկսեց այն ժամանակ մի սոսկալի կոտորած փողոցներում, խաներում և բուլգարական թաղերում: Այդ առաջին գիշերայ ընթացքում, ասում են, սպանեցին 400-ից աւելի և վիրաւորեցին 5-600 հոգի, որոնք թափեցին Կօնակի ներքին բակը: Զարդերը և ձերբակալութիւնները շարունակում են: Զոհերի թիւը այժմ անցնում է 1,000-ից: Գիւկները սայլերով տարւում են թիւրքաց գերեզմանատուն, ուր մնում են առանց թաղման 36-48 ժամ շարունակ: Թիւրքերը կարծում են, որ բուլգարներից ազատելու համար միակ միջոցն է՝ կոտորել բոլորին: Կանայք և երեխաներ նոյնպէս չեն խնայւած: Ամբոխի միջից երբեմն լսում են այնպիսի խօսակցութիւններ, որոնցից փշաքաղում են մարդու մազերը...»

«Հանրային ճանապարհների վրայ բուլգարների որս է ձիշդ այնպէս, ինչպէս կ'որսան ճագարներին: Բաւական է ունէ մասնիչ — իսկ այդպիսիք քիչ չեն տեղացիների մէջ — ցոյց տալ զինւորներին ունէ անցորդի — իսկոյն և եթ յարձակւում ու խողխողում են առանց այլևայլութեան: Եթէ այդ անցորդը ուռմբ է ունենում իր ձեռքը, կարողանում է հեռացնել յարձակողներին: Աերջինները պատասխանում են հրացանաձգութեամբ և այդ պատճառով հաղորդակցութիւնը դառնում է այժմ վերին աստիճանի վտանգաւոր:

«Բուլգարների դիրքը, այն պաղարիւնութիւնը, որով նրանք դիմաւորում են մահը, այն հեգնութիւնն ու արհամարհանքը, որով սպանում են իրենց թշնամիներին — այդ բոլորը վկայում է այնպիսի մի հոգեկան տրամադրութիւն, որ հասնում է ծայրայեղ յուսահատութեան. այդ մարդիկ նախօրոք որոշած են զոհաբերել

իրենց կեանքը: Շատերը նրանցից լաւագոյն են համարում անձնասպան լինել քան թէ ընկնել թշնամու ձեռքը: Դա մի ճշմարիտ դաւադրութիւն է, որ ունի հազարաւոր համախոհներ: Նա նիւթել է մի ծրագիր, որի իրագործման սկիզբն ենք միայն տեսնում»:

* * *

Հետևեալ իրողութիւնը ցոյց է տալիս, թէ որպիսի հերոսական կռիւ են մղում այսօր մակեդոնացի հայրուկները.

Մօտ 30 հոգուց բաղկացած հրոսակների մի խումբ մի քանի օր առաջ իջաւ Սամարշիկ գիւղը և ապաստանեց գիրք ունեցող մի քրիստոնիայի տան մէջ: Մի լրտեսի մատնութեան շնորհիւ 200 թիւրք զինւորներ եկան վաղ առտուն պաշարեցին գիւղը և ուզեցին ներս խուժել: Խուժքը դիմաւորեց նրանց դնդակներով, բայց հայրուկների թիւը շատ չնչին էր՝ երկար դիմադրութեան համար: Զինւորները կարողացան մօտենալ տան և կարծում էին թէ արդէն իրենց ձեռքն են հայրուկները, երբ յանկարծ այդ վերջինները դուրս թռան իրենց թաքստից և մի քանի ուռմբ նետելով, ցիրցան արին թիւրքերին: Այն ժամանակ մեր քաջերը կարողացան փախուստ տալ: Զինւորները մի ըոպէ հետամուտ եղան, բայց արդէն ուշ էր. սպանեցին դաշտում դտնուող մի քանի խաղաղ գեղջուկների, որոնց թւում՝ գիւղի ջահէլ հանդապահին:

Այնուհետև նրանք վերադարձան գիւղ, սկսեցին խուզարկութիւններ, մօտ 20 հոգի բանտարկեցին և ահաւի կերպով տանջեցին, դազանակի հարւածներ տալով, ատամները դուրս քաշելով: Աերջապէս իսպառ թալանեցին գիւղը և կրակի մատնեցին: Հայրուկային խումբը կորցրեց իր երկու առաջնորդներին: Գիւղի բնակիչները փախան ու ապաստանեցին լեռներում:

* * *

Temps-ի Աիեննայի թղթակիցը հաղորդում է ուշագրաւ մանրամասնութիւններ մակեդոնական յեղափոխականների ընդարձակ ծրագրի և խիզախ ձեռնարկների մասին՝ Սալոնիկում:

Գիշերը վրայ հասնելուն պէս՝ դաւադիրները կտրեցին գազի և ջրի անցքերը, օդը ցնդեցնելով այն կամուրջը, որ միացնում է երկաթուղու կայարանը քաղաքի հետ: Միւս կողմից նրանք փորձեցին հրդեհել նաւթի պահեստը: Այդպիսով ամբողջ քաղաքը խորասուզեցին մթութեան մէջ, աշխատելով միաժամանակ զրկել նրան ջրից և հեղեղել նաւթով: Ապա սկսեցին ուռմբեր նետել աջ ու՝ ձախ՝ կառքի մէջ սլանալով գլխաւոր փողոցներով. ոտքի վրայ գործում էին յետ ընկած թաղերի մէջ յարձակւելով մանաւանդ հասարակական այն տեղերի վրայ, ուր յաճախում են եւրօպացիք, և մասնաւորապէս գերմանացիների, Թիւրքիոյ լաւագոյն բարեկամների, ժողովատեղիների և բանկ օտոմանի վրայ, որ ներկայացուցիչ է բալկանեան ժողովուրդներին շահագործող եւրօպական բարձր ֆինանսների: Մինչ այդպէս պայթիւններով ցրւում էին ոստիկանութեան ուշադրութիւնը և զօրքերի գործողութիւնները, դաւադիրները գրոհ տւին գլխաւոր պատւարի՝ բանկ օտոմանի վրայ, հաւանականօրէն ջրմուղով կամ թէ գետնափոր մի անցքով, որ յետոյ գտնւեց: Աերջին վայրկեանին՝ նախագրու-

շարքին բանկի կառավարչին, որ Հեռանայ ընտանիքով. — այդպէս էլ եղաւ:

Բազմաթիւ ուժերը պայթեցին նախ այդու մէջ: Պահպան ժանդարմը սպանեց ատրճանակի մի հար- ւածով: Ապա յեղափոխականները ազատ ճամբայ ունե- նալով՝ սկսեցին մեծ քանակութեամբ ուժերը պայ- թեցնել ներսում:

Տ Ե Ռ Օ Ր

Վասպուրականի Կեդր. Կոմիտէի որոշմամբ տէնորի ենթարկւեցաւ յայտնի մասնիչ Խ ա չ Ի Կ Ս Է մ Է ր - ճ ե ա ն ը փետրւար 2/15-ին կիրակի երեկոյ ժամը 11-ին: Տէնորիստը ազատ է:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ՆԱԻԱՐԱՆԳՍՏԻ Կեդր. Կոմիտէն ստացած է՝

Ջրաշէնի Գրգուռ խմբ. 300 ուղբի, Ջրաշէնի Ղարիբ խմբ. 40, Վարազդատ խմբ. 100, Գազան տարօնեցի խմբ. 100, Կայծակ խմբ. 100, Արծիւ խմբ. 60, Ժողովասար խմբ. 80, Տարօնեցի խմբ. 57, Բիւրակն խմբ. 30, Կարէգ խմբ. 45, Առիւծ խմբ. 30, Նեփ- րովտ խմբ. 35, Յրնկատար խմբ. 30, Յրնկատարի խմբապետ 20, Սիփան 35, Իշխանակ խմբ. 21, Իշխանակ Մ-քից 8, Նա- ւիխան խմբ. 20, Խիկար խմբ. 17, Ռուբինեաց խմբ. 10, Ուսա- նողական միջնադու խմբ. 8. 50, Արազած խմբ. 5 ուղբի:

Յունարհի ամսավճարներ նախորդ տարւան մնացածով միասին. Արմատ խմբի երեք ծիւղերից 100 ուղբի, Արշալիք խմբ. 180, Աղբիւրաւոր խմբ. 36. 50, Բիւրակն խմբ. 38. 50, Սիփան խմբ. 36, Կայծակ խմբ. 38. 90, Սօջանակ խմբ. 60, Իշխանակ խմբ. 28, Իշխանակ խմբ. 8, Կարնչ խմբ. 24. 60, Գազան տարօնեցի 28, Ծարտար խմբ. 19, Յրնկատար խմբ. 22. 30, Վարազդատ խմբ. 20, Արազած խմբ. 20. 20, Խիկար խմբ. 11, Խաչալիք խմբ. 10, Ժողովասար խմբ. 8. 80, Մազանի պողպատ 3. 50, Զորավորի Գեթնիմունի խմբ. 34. 40, Դերձակ խումբից՝ Պալի 1. 50, Մամիկոն 1. 50, Գուրգէն 1. 50, Մարդասէր 1. 50, Տ. Աւետիք 3, Վահան 3. 20, Մ. Զօրավար 0. 40, Ռոտոր 1, Բերրո 3. 40, Սմբատ 3. 20, Անցորդ 0. 60, Զինուոր 0. 75, Երիվան 0. 80, Երրակ 2. 40, Փեղատ 1. 60, Մ. Կայծեր 1, Ա. Բ. 1, Եանազար 1. 60, Մ. Նուբար 1. 80, Մեհրոպ 3, Ալեշան 0. 40, Տիրակ 0. 80, Տաճատ 1, Եղեմ 1, Հայկ 1, Վարդգէս, Արարիսիա, Մ՛՛է, Մարի գինուր, Մ. Զազան, Տիթ 50-ական կօպէկ, Արամ 25 կ., Երիվան 30 կ., Զար 20 կ., Կրօտ 20 կ., Դերձակ խմբի նոր-կեանք ծիւղից՝ Գ. Վահան, Ասլան, Կայտառ, Վարդ, Մուշեղ, Արտաւազ, Մամուէկ, Բարկէն, Արամ, Աշ. Երկաթ, Արտաշէս, Երևան, Է. Զօրաւոր, Վարդան, Վաղարշակ, Մ. 50-ական կօպէկ, Վեճակախառից 25 ուղբի, Լուսինից 5, Վեց տղաներից տուգանք 3, Եանթ խմբից սխալ- մամբ ուշացած 6 ուղբի:

Ընդհանուր գումար 1962 ուղբի 10 կօպէկ:

ՔԱՐԻ Կեդր. Կոմիտէն՝

1901 թ. ընթացքում՝ ԿԱՐՈՒՄ եղած խմբերի ամսավճարներ՝ Արմէնիա խմբ. 19. 90 ուղբի, Թաթուլ խմբ. 21. 98, Աղբիւր խմբ. 29. 20, Գուրգէն խմբ. 1. 85, Արշալիք խմբ. 34, Անամուն խմբ. 2. 60, Վազգէն 15. 45, Նախագործ գիւղի Արծիւ խմբ. 12, Տօ- նածառից ստացւած 32. 71, ծախւած երկու անտէր հրացանի փող 18, Նէի գանձապահից 5, մնացորդ առ 1-ն յունարհի 1901 թ. 62. 61 ուղբի:

1902 թ-ի ընթացքում՝ մնացորդ առ 1-ն յունարհի 1902 թ. 50. 30 ուղբի, ստացւած ապտիկ ի հաշիւ 1901 թ. 0. 20, ծախւած մի ծի 11. 50 ուղբի:

Ենթակոմիտէներին ստացւած՝ հանգանակութիւն եւ Նէր, Թումբից (յունիս) 82. 83 ուղբի, Վանաձորից — քահանայից — (օգոստոս) 100, Փանակութիւն գիւղից (սեպտ.) 28. 15, Տղմուտ գիւղից (սեպտ.) 21, Ախուրեան գիւղից (սեպտ.) 11. 65, Թոշնակ գիւղից (սեպտ.) 25. 87, Եփրատ գիւղից (հոկտ.) 40, Դուռնա- պատ գիւղից (նոյեմբ.) 20, Ժառնիկ գիւղից (նոյեմբ.) 20, Բլուր գիւղից (դեկտ.) 10, Բլուր գիւղից Վոսմից Նէր (դեկտ.) 10, Բարդաշէն գիւղից Վոսմից Նէր 13, Ուխտաւորից Նէր 7,

Գանդամ գիւղի հոկտ. տրւած ներկայացումից 23. 10, ամս- վճարներ՝ Գանդամ գիւղից 24. 60, Գետակ գիւղից 10. 20, Փլատակ գիւղից 3, Բալիաթուն գիւղից 6. 80, Բենեո գիւղից 19. 60, Բարթաշէն գիւղից 9. 65: Տնորում՝ հանգանակութիւն եւ Նէր ապրիլ ամսին Սէրգէլի ժամանակ ներկայութեամբ N° N° 173, 174, 175 եւ 176 թերթերով 195, մայիսին մի ժողո- վում հանգանակւած 18. 86, օգոստոսին փարսաւի ծեղրով հան- գանակւած 2. 60, մի հարսանքում նւիրւածի ծեղրով 6 ուղբի:

Նւիրատուութեան թերթերով:

Table with 3 columns: N°, N°, N°. Rows 1-6 showing publication numbers and counts.

Ստացագիրներով:

Table with 3 columns: N°, N°, N°. Rows 1246-1253 showing publication numbers and counts.

Երեկոյ թեր եւ քէ Գ Կ Ե ր՝ փետրւարին Տիկ. տանը 10 ու, մայիսին Սօսի խմբի կազմ. երեկոյթ. 53. 20, յունիսին Յունան խմբի կազմած երեկոյթից 74. 13, յուլիսին Վէմնան խմբի քաղաքայ քէֆից 33. 25, յուլիսին Արշալիք խմբի Խանասարի յիշատակին 80, յուլիսին սիրողների կազմած երեկոյթից 30. 48, օգոստոսին Եղծայ խմբի կազմած երեկոյթից 40, օգոստոսին Արարտեան խմբի քէֆից 40, սեպտեմբերին Մարո խմբի երեկոյթից 94. 39, սեպտեմբերին ծիածան խմբի երեկոյթից 70 ուղբի:

Ն Ե ր Կ ա յ ա ց ու մ ն Ե ր եւ կ օ ս ց Ե ր տ ն Ե ր՝ Բոյս եւ եղ- բայր ներկայացումից 36. 50 ու, Լիբայի կազմ. կօնցերտ. 8. 35, Յոյս խմբի ներկայաց. 30, Վէմնան խմբի ներկայաց. 22. 10, Սիրայ խմբի ներկայաց. 25, Արմէնիա եւ Աղբիւր Սերոբ ներկայաց. 40, Վիշապազունք խմբի ներկայաց. 28. 40, Ժիւճան խ. կազմած վիճակախառից 10, Արմէնիա խմբի կազմած վիճակախառ. 15 ու:

Խ մ ք Ե ր Կ ա յ ա յ ա յ Ե ր Ե ր՝ Ծարտար խ. 28. 75 ու, Գուրգէն խ. 20, Արշալիք խ. 75. 85, Արմէնիա խ. 1. 87, Արմէնիա խ. 11. 30, Սիրայ խ. 27, Եղծայ խ. 25. 40, Աղբիւր Սերոբ 50. 30, Կորնիւք խ. 30. 70, Արծիւ խ. 8, Արարատ խ. 11. 95, Նէմրով խ. 21. 5, Վազգէն խ. 44. 60, Անրոց խ. 10, Վէմնան խ. 12. 40, Սօսի խ. 26, Յունան խ. 13. 40, Ժիւճան խ. 23, Կրակ խ. 14, Մարտեան խ. 5. 50, Զաքարիան խ. 8, Դուռնակ խ. 22, Կարգէն 25, Նիգ 14. 80, Ժողովասար 35, Կարմիր աղբիւր 10. 80, Երրակ 6. 60 ու:

Ընդհանուր գումար 2849 ուղբի 56 կօպէկ:

ՊԱՎԱՆՆԱՆ Կեդր. Կոմիտէն՝

ՎԱՌՆԱՅԻ Կոմիտէն՝ Վարդոյի ծնունդը հանգանակւած՝ Յարոյ 200 Քր., ոսկի, Տիկ-ն 100, Ա. ք. 80, Ռոմ 60, Յոյս 40, Երկրագործ 50, Սուրէն, Վահան Մամիկոնեան, Անդրանիկ, Ը., Ռոմ Վ., Հաճի Մայ, Պոստուցի 20-ական, Արաքս, Զգօն, Զեկիւր 10-նական, Հայ ոմն 5: Դուռնակ 705 Քրանք ոսկի:

Ն. 50- լէվ արծաթ, Ժիրայր 40, Տ. Գ. (Ռուսշուգէն) 40, Սիսակ Սիսակեան 50, Վանայի հայ ուսուցչական խումբ 30, Խնդակցող 30, Ա. Խ. 25, Ա. Մ. 20, Ռոմ 20, Սպայ Արեւիկա 10, Ռուսշուգի երկու ընկերներ 10, Վանայի Ռշուռնի խումբ 10, Ազատ խմբի եռամսեայ հաշիւ 15, Սերոբ 2, Օրնիկ Կարա- պետեան 5, Ռոմ 3, Հայ մը 5, Գ. 8. 10, Ս. Թ. 5, Ամօ 1, Հայկ 10, Հայաստ 10, Կ. Պօլսեցի 10, Ծավրիկ 3, Ն. Գ. Գ. 3, Ռոմ 10, Հրաշ Ռշուգեան 5, Մարո 5, Տէր Մարտիրոս Հայր 6 Տէր Սարգիս. Հայր 5, Երկու քարեկամներ 10, Վարպետ Գ. Կ. 5:

Արտաքի ծնունդ՝ Ա. Ը. 1 լէվ արծաթ, Ա. Կրիմիշէ, Խաչօ, Տիւնճէ, Բարսեղ Միսակ, Ռէշայ 5-ական, Սարգիս. Սուքիաս, Սիսակ, Ն. Խ., Յար. Սիսակեան 3-ական, Սարգ., Ժամագործ Ա. Խլաթեան, Վարդան, Մարտ, Ժամագործ, Սիսակ, Գայկ Ա. Ա., Ռ. Հ., Խղճահար, Ռոմ, Վարդան, Լիւն եւ Այբ. Հ. Մ., Թաթօ, Ամուսնացեալէն 2-ական:

Ընդհանուր գումար 705 Քրանք ոսկի եւ 475 լէվ արծաթ: